



ՄԵԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՆԱԼՈՎ ԲԱՐՈՅԵԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔ

Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծման նպատակով կայացաւ Ռոբերտ Գոչարեան-Հէյտար Ալիբե հեռքական հանդիպումը, որի սկզբում դատապարտուած էր ձախողութեան: Նման հանդիպումներ այլու դարձած են անհիմաստ ու պարզապէս մի քանի ամիսը անգամ կը կրկնուին, եւ ԱՀԿ Միմսկի Խումբի միջնորդները եւ հանրային կարծիքը բաւարարելու նպատակաւ:

Յստակ եւ պարզ է թէ, դարաբաղեան հարցի լուծումը կը կարօտի փոխադարձ այնպիսի ծանր ու «ցուցնող» գիշումներու, որոնք ի վիճակի չեն կատարելու ո՛չ Գոչարեանը եւ ոչ ալ Ալիբեը:

Մէկդի դնելով Ալիբեը անկարողութեան պատճառները, անդրադառնալով Գոչարեանին: Արդարեւ, Գոչարեան իշխանութեան վրայ կը գտնուի համատարած կեղծիքներով տեղի ունեցած ընտրութիւններու շնորհիւ եւ ան իր աքոռը կը պահէ միմիայն երկրին մէջ ստեղծած ըլլալով միապետական դրութիւն մը, որու օղակները բաւական փխրուն են ու միշտ ենթակայ անջատուելու: Նման պայմաններու տակ գործող իշխանաւորը, առաջին հերթին չունի բարոյական իրաւունք իր ժողովուրդի անուանով բանակցութիւններ վարելու եւ կամ հողային գիշումներ կատարելու: Նաեւ գուրկ կը մնայ որեւէ պայմանագրի շուրջ ապահովելու երկրի բաղկացուցիչ բոլոր տարրերու համախոհութիւնը:

Գոչարեանի տիրահոգակ իշխանութիւնը իր աւարտին կը հասնի նուազ քան երկու տարիներ ետք: 2008-ին նախատեսուած են նախագահական նոր ընտրութիւններ, որմէ կախեալ է ոչ միայն Հայաստանի ապագան, այլ նաեւ այդ ընտրութիւններուն մէջ է դարաբաղեան հարցի լուծման բանալին:

Հայաստանի նախագահական աքոռին ձգտող քեկնածուները պարտաւոր են ազգին ներկայացնելու նաեւ Արցախի հարցի լուծման շուրջ իրենց ծրագրերը, որու հիման վրայ, ու բացառապէս ժողովրդավարական ազատ եւ արդար ընտրութիւններու միջոցաւ իշխանութեան եկած նախագահը, գիտնուած իր ժողովուրդի նեցուկով ու վստահութեամբ, կ'ունենայ այդ բարոյական իրաւունքը եւ բանակցութիւններ վարելու եւ գիշումներ կատարելու:

Մինչ այ Գոչարեան-Ալիբե հանդիպումները կը շարունակեն կրել ձեւական բնոյթ եւ ներկայ պայմաններու տակ որեւէ արդիւնքի հասնելու հեռանկարը կը մնան խիստ կասկածելի ու նաեւ անբաղանջ:

Ս.Դ.Հ.Կ. Մամուլ Դիւան

ԱԼԻԵՒ-ՔՈՉԱՐԵԱՆ ՇԱՆԴՊՈՒՄԸ ԱՊԱՐԴԻՒՆ, ՍԱԿԱՅՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ԼԱԻԱՏԵՍ

Յունիս 4-ին Ռուսաստանի մայրաքաղաք Պուսարեատի մէջ հանդիպեցան Հայաստանի եւ Ատրպէյճանի իշխանաւորներ՝ Ռոբերտ Գոչարեանը եւ Իլհամ Ալիբեը: Հանդիպումէն ետք եւ ինչպէս որ կ'ենթադրուէր անոնք ոչ մէկ փաստաթուղթ չստորագրեցին՝ Լեոնային Ղարաբաղի հարցի լուծման վերաբերեալ:

«Նախագահները հանդիպեցան երկու քուկէս ժամ: Տեղի ունեցաւ հարցերու մանրամասն քննարկում: Ապա նախագահները հանդիպեցան համանախագահներուն՝ շուրջ 45 րոպէ: Բանակցութիւններու ընթացքին կը տիրէր լաւ մթնոլորտ: Տեսնենք, թէ յետոյ ինչ կ'ըլլայ», - բանակցութիւններու աւարտին «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է ԵԱՀԿ Միմսկի խումբի ամերիկացի համանախագահ Սթիվըն Մանն:

«Կը շարունակենք հաւատալ, որ 2006 թուականը պատուհան է Ղարաբաղի շուրջ համաձայնութեան հասնելու համար», - աւելցուցած է ԱՄՆ-ի ներկայացուցիչը:

Իսկ, Եւրոպայի եւ Եւրոսիայի հարցերով Ամերիկայի պետական քարտուղարի տեղակալ Տէնիէլ Ֆրիտ կատարած է աւելի ուշագրաւ յայտարարութիւն մը, որու մտքերը աւելի շատ նպատաւոր են Ատրպէյճանական կողմին համար:

«Համանախագահները առաջարկած են որոշ մտքեր, որոնք կրնան լաւ հիմք դառնալ հակամարտութեան լուծման համար: Երկիրներու ղեկավարներուն մէնք ալ առաջարկները ներկայացուցած ենք: Որպէս Ամերիկայի ներկայացուցիչ, ես ըսած եմ, որ մենք կը փափաքինք շուտ տեսնել կարելի եղածին չափ շատ տարածքներու վերադարձը Ատրպէյճանին, ինչպէս նաեւ ատրպէյճանցիներու վերադարձը իրենց հարազատ վայրեր: Այստեղ կայ երկու պետութեան շահն ալ: Կան շարք մը տարբերակներ: Կը կարծես որ, երկու նախագահներն ալ լուրջ անձնաւորութիւն են: Անոնք կ'ուսումնասիրեն առաջարկները, որոնք մենք ներկայացուցած ենք: Մենք չենք ուզէր ճշուժ գործադրել եւ որպէս երկու պետութեան ընկեր, կ'ուզենք անոնց օգնել», - ըսած է ամերիկացի դիւանագէտը:

ԵԱՀԿ Միմսկի խումբի ռուսաստանեան համանախագահ Եուրի Մերզլեակով, արտայայտելով բանակցային գործընթացին Ռուսաստանի դիրքորոշումը, յայտնեց, որ այդ հարցի լուծումը չի կրնար դնել միայն հակամարտութեան երկու կողմերու վրայ: «Անոնք պէտք է այդ լուծման հասնին ինքնուրոյն, բաց միջնորդներու օգնութեամբ», - ըսած է

ան եւ շեշտած, որ կողմերը իրենք են հիմնական պատասխանատուն՝ համաձայնութեան հասնելու համար:

ԵԱՀԿ Միմսկի խումբի երեք համանախագահները Յունիս 6-ին հանդէս եկան համատեղ յայտարարութեամբ մը, խաղաղ կարգաւորումը նկատելով «հարաւոր եւ հրամայական»: Անոնց յայտարարութեան մէջ ըսուած է. «Համանախագահները կը պնդեն իրենց այն կարծիքը, որ ինդիքի խաղաղ կարգաւորումը եւ հրամայական է, եւ հասանելի է 2006 թուականը կը հանդիսանայ կարեւոր տարի այս առումով»:

Համանախագահները կը շարունակեն հաւատալ, որ իրենց նշած եւ կողմերուն առաջարկած հիմնական սկզբունքները հաւասար պայմաններ կ'ընձեռեն հիմնախնդրի կարգաւորման ուղղութեամբ: Անոնք կը զոջան, որ կողմերը դեռեւս համաձայնութեան չեն եկած այս սկզբունքներու շուրջ: Համանախագահները կը յայտնեն, որ Յունիսի վերջերուն պէտք է տեղեկացնեն ԵԱՀԿ մշտական խորհուրդին իրենց քայլերու մասին:

ԹՈՒՐՔԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

«Թուրքիա - Հայաստան գաղտնի բանակցութիւնները կը շարունակուին, եւ այժմ բանակցութիւններու նոր փուլ կը նախապատրաստուի», - անցեալ շաբաթուայ ընթացքին Անգարայի մէջ կայացած ասուլիսի մը ընթացքին յայտարարած է Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութեան խօսնակ Նամիկ Թան:

Ըստ խօսնակի՝ վերջին տարուայ ընթացքին Թուրքիոյ եւ Հայաստանի դիւանագէտները հանդիպած են երեք անգամ:

Թրքական լրատուամիջոցները կը պնդեն, որ վերջին հանդիպումը տեղի ունեցած է այս տարուայ Մարտին՝ Վիեննայի մէջ: Այդ նոյն օրերուն կ'ընթանային Թուրքիա - Եւրամիութիւն բանակցութիւնները եւ Թուրքիոյ Արտաքին գործոց նախարար Աբդուլա Գիւլ անձամբ կը հետեւէր հայ եւ թուրք պաշտօնեաներու հանդիպումին, որ գաղտնի կը պահուէր լրատուամիջոցներէն:

«Աստիճիցի ֆրենս» գործակալութիւնը կը յայտնէ, որ «բա-

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆ ՏԻՐԱՑԱԲ ՇԱԽՄԱՏԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ



Շախմատի Աշխարհի Ախոյեան Հայաստանի կազմը
Լեւոն Արզուման, Վլատիմիր Յակոբեան, Կարէն Ասրեան, Գաբրիէլ Սարգսեան, Սմբատ Լպուտեան եւ Արտաշէս Միմասեան եւ մարզիչ Տիգրան Նալբանդեան

Շախմատի Հայաստանի հաւաքականը Թուրինի մէջ տեղի ունեցած համաշխարհային 37-րդ Ողիմպիականներու վերջին՝ 13-րդ խաղին, ոչ-ոքի՝ 2:2 հաշուով աւարտելով հանդիպումը Հունգարիայի հետ, 36 միաւորով դարձաւ աշխարհի ախոյեան:

Այսպիսով հայկական շախմատը կրկին փայլեցաւ աշխարհի մէջ, այս անգամ խմբային պայքարի

մէջ դառնալով մոլորակի ուժեղագոյն հաւաքականը, բան մը որ, աննախադէպ յաջողութիւն է, ոչ միայն հայկական շախմատի, այլեւ մեր ամբողջ ազգի եւ սպորտի պատմութեան մէջ:

Մրցաշարքի ընթացքին հայութիւնը մեծ անհամբերութեամբ կը սպասէր Թուրինէն հասնող տե-

Շաբ.ը էջ 4

ԼՈՒՐԵՐ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՏՃԱՌ ԶԿԱՅ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅՔ-ՖԷ»: ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանն առաջիկա չի շտապում տեղեկացնել, թե Սերժ Սարգսյանը ՀՀ-ի համամասնական ցուցակում տեղ կ'ունենայ, թե՞ ոչ՝ «ժամանակը կգայ՝ կ'իմանաք»,- Յունիս 5-ին լրագրողների հետ ճեպագրույցի ժամանակ ասել է Անդրանիկ Մարգարեանը:



Անդրանիկ Մարգարեան կը պատասխանէ լրագրողներու հարցերուն

2007-ի փետրուար-Մարտ ամիսներին միայն «Հանրապետական» կուսակցութեան խորհուրդը կը ճշտի ընտրութիւնները մասնակցութեան համամասնական ցուցակը եւ նաեւ այդ ժամանակ պարզ կը լինի ՀՀ-ն դաշինքով է գնում ընտրութիւններին, թե՞ միայնակ, սակայն այս պահին, վարչապետի եւ ՀՀ-ի համար բոլոր ուժերը «պոտենցիալ դաշնակիցներ են»:

Անդրանիկ Մարգարեանը անկեղծօրէն վստահեցնում է, թէ ընտրութիւնները ժամանակ լցնումներ չեն եղել եւ լաւատեսօրէն կարծում, որ Հայաստանում «ժողովուրդն է որոշում» ով կը յայտնուի Ազգային ժողովում, այլ ոչ՝ պլանաւորումները: Այն հարցին, թէ ինչով վարչապետը կը բացատրի, որ հանրապետութեան ուսուցիչներն ու մանկավարժները մեծ թափով անդամագրուում են ՀՀ-ին, մասնաւորապէս Արմախի մարզում արձանագրուած դէպքեր, վարչապետը պատասխանեց.

«Մտնում են ոչ միայն «Հանրապետական» կուսակցութիւն: Ինչ մտնում է Արմախի մարզից եկած բողոքներին՝ ես տեղեկ եմ: Դրանք իրականութեանը չեն համապատասխանում: Ես թերթին չեմ հաւատում»:

Ի դէպ, «Հանրապետական» վարչապետը համոզուած է, որ Կառավարութեան հրաժարականի պատճառ չկայ: Իսկ պատասխանելով այն հարցին, թէ դատելով ՀՅԴ եւ գլխաւոր դատախազ լարուած յարաբերութիւնները կարելի է ենթադրել, որ իշխանութեան ներսում նոր սկանդալ է հաստատուում, Անդրանիկ Մարգարեանը պատասխանեց. «Ոչ: Մասնաւոր դէպքեր են եղել: Մենք կ'աշխատենք յարթել»:

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Հինգշաբթի, Մայիս 1-ին Հայաստանի Ազգային ժողովի նոր նախագահ ընտրուեց Տիգրան Թորոսեանը, որը մինչ այդ խորհրդարանի փոխսօսնակն էր: Նա առաջադրուած միակ թեկնածուն էր:



Հայաստանի Ազգային ժողովի նոր նախագահ Տիգրան Թորոսեանի օգտին 97 պատգամաւորներ

Հանրապետական կուսակցութեան կողմից առաջադրուած Տիգրան Թորոսեանի օգտին 97 պատգամաւորներից քուէարկեց 94-ը: Մէկ խորհրդարանական դէմ քուէարկեց «Արդարութիւն» դաշինքը եւ «Ազգային միաբանութիւն»-ը մասնակցեցին թեկնածութեան քննարկմանը, բայց չմասնակցեցին փակ զարտնի քուէարկութեանը: Ընդդիմութեան շարքերն անցած «Օրինաց երկիր» խմբակցութիւնը՝ այդ թւում նաեւ նախկին խօսնակ Արթուր Բաղդասարեանը, մասնակցեց քուէարկութեանը:

Մինչ այդ, միայն ելուցի համար Աժ դահլիճ մտած Բաղդասարեանը ասել էր. - «Յարգում եմ [Տիգրան Թորոսեանին]: Համարում եմ մեր խորհրդարանի փոքրաթիւ պրոֆեսիոնալներին մէկը»:

Թորոսեանի պաշտօնակատարող պրոֆեսիոնալիզմի եւ մարդկային յատկանիշների մասին դրուատանքով խօսեցին նաեւ ընդդիմադիր-

ները՝ բազմիցս սակայն շեշտելով, թէ «անձի փոփոխութեամբ բեկում չի մտնի երկրի կեանքում»:

«Դուք հաւատո՞ւմ էք, որ Ազգային ժողովի նախագահը երկրի երկրորդ դէմքն է, երբ մշակել են մեխանիզմ, որը մէկ նպատակ ունի՝ երկրում խեղդել ժողովրդավարութիւնը», - ասաց «Արդարութիւն» դաշինքը ներկայացնող պատգամաւոր Գրիգոր Յարութիւնեանը:

«Եթէ մենք միասին աշխատենք, լինենք այնքան միասնական, որքան այսօր, կը կարողանանք լուծել ցանկացած հարց», - արդէն ընտրուելուց յետոյ յայտարարեց Տիգրան Թորոսեանը՝ աւելացնելով, որ «ժողովրդավարական ընտրութիւններ անցկացնելուն այլընտրանք չունի Հայաստանը»:

ԱՂՈՒԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆԸ ՀԵՐՔՈՒՄ Է, ԹԷ ԿԱՊ ՈՒՆԻ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅՔ-ՖԷ»: Հայաստանի գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը Հինգշաբթի օրը կրկին հերքել է, թէ որեւէ առնչութիւն ունի «Միաւորում յանուն Հայաստանի» կուսակցութեան ստեղծմանը:

«Ես կուսակցական շինարարութեամբ չեմ զբաղոււմ. բազում անգամներ ասել եմ», - պնդեց Աղուան Յովսէփեանը: - «Իսկ մի բան կարելի է ասել մի անգամ՝ բոլորը հասկանան, մի բան կարելի է ասել տասը անգամ՝ բոլորը չհասկանան»:

Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը այս շաբաթ ասելի վաղ՝ անդրադառնալով մամուլում շրջանառուող լուրերին, թէ «Միաւորում յանուն Հայաստանի» կուսակցութիւնը ստեղծում է Հայաստանի գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը,

«Ազատութիւն» ռադիոկայանին ասել էր. - «Դատախազն իրաւունք չունի քաղաքական կուսակցութիւն ստեղծելու՝ ո՛չ ուղղակի, ո՛չ անուղղակի: Երկիրը նրան չպիտի թոյլ տայ»:

Հրանդ Մարգարեանը, ճիշդ է՝ առանց մանրամասնելու, թէ ում նկատի ունի, նաեւ ասել էր, թէ «Հայաստանում կան մարդիկ, որոնք իրենց համարում են այսինչ մարդի ֆեոդալը: Խօսքը Արագածոտնի մարզի մասին է»:

Արագածոտնի մարզի կազմի մէջ մտնող Ապարանի շրջանում դատախազը, ով նաեւ «Նիզ - Ապարան» հայրենակցական միութեան պատուաւոր նախագահն է ունի բազմաթիւ կողմնակիցներ:

Այս կապակցութեամբ Աղուան Յովսէփեանը արձագանքեց. - «ժողովուրդը լաւ գիտի՝ ով ով է»:

ՎԻԿՏՈՐ ԴԱԼԼԱՔԵԱՆԸ ՉԻ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ԿՈՃԱԿ ԱՇԽԱՏԵԼ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: ՀՀ Աժ «Արդարութիւն» դաշինքի պատգամաւոր Վիկտոր Դալլաքեանը հաւաստիացնում է, որ սկսած 1997 թուականին չի գործում ՀՀ անվտանգութեան խորհուրդը եւ դժուար է ասել՝ որտեղ են լուծուած ՀՀ անվտանգութեան վերաբերող հարցերը՝ «կազինոներում, թէ սառնաներում»:

Վիկտոր Դալլաքեանը ազգային անվտանգութեան ոլորտում վարուող ներկայիս քաղաքականութիւնը ոտնատակ տուեց հենց իշխանութիւնների մշակած ազգային անվտանգութեան հայեցակարգից մէջբերումներ անելով: «Ներքին վտանգների շարքում յիշատակում են պետական համակարգի անկատարութիւնը կամ չկայացումը, կոռուպցիան եւ կաշառակերութիւնը, իշխանութիւնների հանդէպ հասարակական անվստահութիւնը: Այս խոցերի պատասխանատուն գործող իշխանութիւնն է, իսկ ՀՀ անվտանգութեան ամենամեծ սպառնալիքներից մէկը չընտրուած իշխանութիւններն են: Մա ինքնախոստովանութիւն է ազգային անվտանգութեան բացակայութեան մասին», արձանագրում է Վիկտոր Դալլաքեանը:

Նրա կարծիքով, մեր յարաբերութիւնները մեր հարեւանների հետ պէտք է լինեն բարիդրացիական եւ փոխհասարակ, եւ Հարաւային Կովկասի երեք երկրները պէտք է լինեն անվտանգութեան նոյն համակարգում: Յիշեցնեք, որ նշուած երեքից երկուսը՝ Վրաստան եւ Ատրպէյճան, շտապում են օր առաջ յայտնուել ՆԱՏՕ-ում, Հայաստանը կողմ է ՆԱՏՕ-ի հետ սերտ եւ անհատական համագործակցութեանը: «Էներգետիկ համակարգի 95 տոկոսը տրուել է օտարին: Մա մեր անվտանգութեանը եւ անկախութեանը առնչուող խնդիր է», վստահ է Վիկտոր Դալլաքեանը: Մա միակ թիւը չէր, որ հրապարակեց Վիկտոր Դալլաքեանը: Ըստ նրա, վերջին 15 օրում ՀՀ քաղաքացիները դրամ-դոլար խաղերի արդիւնքում կորցրել են 26 միլիոն դոլար: Ըստ տնտեսագէտների հաշուարկի, նոյն խաղերով «իշխանութիւնները ժողովրդից տարեկան գողանում են 300 միլիոն դոլար»: Էլի թուեր. նուազագոյն սպառողական զամբիւղը 28 000 դրամ է, սակայն այսօր Հայաստանում կան միջինը 10 000 դրամ ստացող 530 000 թշուառու եւ միջինը 7000 դրամ ստացող 170 000 նպաստառու:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԱՏՈՒԿ ՎԵՐԱՀՍՈՒՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅՔ-ՖԷ»: Հայաստանը հանդիսանում է կանանց ու աղջիկների սեռական շահագործման նպատակով իրականացող թրաֆիկինգի (մարդկանց առեւտրի) խոշոր սկզբնաղբիւր՝ հիմնականում դէպի Միացեալ Արաբական Էմիրութիւններ (ՄԱԷ) եւ Թուրքիա, որոշ չափով նաեւ տարանցիկ ու վերջնակէտ երկիր:

Թրաֆիկինգ իրականացնողները, որոնց մեծ մասը կանայք են, գոհերին ուղղակիօրէն կամ Մոսկուայով հասցնում են Դուբայ: Թրաֆիկինգ իրականացնողները Թուրքիա գոհերին տեղափոխում են ավտոբուսով՝ անցնելով Վրաստանի տարածքով: Ըստ հաղորդումների հայաստանեան գոհերի միջոցով թրաֆիկինգից ստացուող շահոյթը նախորդ տարուայ համեմատ կտրուկ աճել է:

Արդէն երկրորդ տարին է, ինչ Հայաստանը տեղ է գտնում երկրների դասակարգման ասնդակի երկրորդ խմբի յատուկ վերահսկման ցուցակում, ինչը փաստում է, որ վերջին տարուայ ընթացքում երկիրն այս ասպարէզում, մասնաւորապէս՝ հարկադրման, թրաֆիկինգի հետ կապուած կոռուպցիայի ու գոհերի պաշտպանութեան հարցերում իր աշխատանքներն աշխուժացնելու վերաբերեալ բաւարար ապացույցներ չի կարողացել ապահովել:

ՕՐԱՆ ԴՈՒՐԵԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԾԱՆՐ Է

Մեծանուն դիրիժոր Օհան Դուրեանի առողջական վիճակը մտնում է ծանր. «Նախիբ» բժշկական կենտրոնից կը տեղեկացնեն, որ ինսուլտի արտոքումամբ հոն տեղափոխուել է մասետրոն: Նա անգիտակից վիճակում է. միացուած է արհեստական շնչառութեան սարքը: Ի դէպ, այս օրերուն մասետրոն պէտք է մեկնէր Մոսկուա, այնտեղից էլ Պեկին՝ Յունիսի 10-ին բացօթեայ համերգ տալու համար:

ԼՈՒՐԵՐ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԶԱՅԵՐԸ ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Մոսկուայի հայ համայնքը սկսել է ակցիաների շարք՝ ի յիշատակ սափրագլուխների ձեռքերից զոհուածների: Այդպիսի ակցիաներից մէկի կազմակերպչը երիտասարդներն էին, որոնք ներկայացնում էին Մոսկուայի եւ դրա շրջակայքի բնակավայրերի հայ համայնքը:



Հայ երիտասարդներ Մոսկուայի մէջ մոմաւարութեամբ ցայց կը կատարեն

Կազմակերպիչները շարքում են Մոսկուայի պետական Համալսարանի ուսանողները եւ դասախօսները, հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչները, հայ երիտասարդութեան մտաւոր գործակցութեան միութեան անդամները: Ի դէպ, Ռուսաստանի Հայերի Միութիւն կազմակերպութիւնը հրաժարուել էր Յունիսի 3-ին մասնակցել բողոքի ակցիային՝ իր որոշումը հիմնաւորելով իշխանութիւնների կողմից ակցիայի ոչ արտօնուած լինելով, հաղորդում է «Երկրամաս» թերթը: Յիշեցնենք, որ Մայիսի 25-ին գնացքում սպանուել է 19-ամեայ Արթուր Սարգսեանը: Հետաքննութիւն իրականացնողները կարծում են, որ սպանութիւնը տեղի է ունեցել ազգային հողի վրայ՝ տասնեակ վկաների ներկայութեամբ եր-

կու մարդասպան դանակով մի քանի հարուած են հասցրել Սարգսեանին: Այդ սպանութեան պահին դեռ չէր բացայայտուել եւս մէկ հայ երիտասարդի սպանութիւն, որը տեղի էր ունեցել Ապրիլի 22-ին: Մոսկուայի մետրոյի կայարաններից մէկում դանակահարուել էր Վիգէն Աբրահամեանը: Չնայած երկու դէպքում էլ եղել են բազմաթիւ վկաներ, սակայն մինչ այսօր չի պարզուել մարդասպանների ինքնութիւնը եւ ոչ մէկը չի ձերբակալուել:

ՕՐԱՆ ՓԱՄՈՒԿ. «ՊԵՏՔ Է ԱԶԱՏ ԽՕՍԵԼ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԻՆՉ ՏԵՂԻ Է ՌԵՆԵՑԵԼ ԶԱՅԵՐԻ ՅԵՏ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Պէտք է ազատ խօսել այն մասին, ինչ տեղի է ունեցել հայերի հետ Օսմանեան կայսրութիւնում», - Հինգշաբթի օրը Մոսկուայում յայտարարել է թուրք յայտնի գրող Օրհան Փամուկը՝ աւելացնելով. - «Սա, առաջին հերթին, թուրքիայի ներքին խնդիրն է, խօսքի ազատութեան, ժողովրդավարութեան խնդիր եւ վերջապէս՝ նոր միջազգային քաղաքականութեան խնդիր»: Ռուսաստանեան «Նովոստի» գործակալութիւնում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, պատասխանելով հարցին, թէ, իր կարծիքով, թուրքիան ե՞րբ կը ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը, Օրհան Փամուկը լոյս է յայտնել, որ դա տեղի կ'ունենայ հնարաւորինս շուտ եւ թուրք հասարակութիւնը կը սկսի ազատ խօսել այդ խնդրի մասին:

Մոսկովեան ասուլիսի ընթացքում Փամուկը չի օգտագործել «ցեղասպանութիւն» բառը: Ներկայացնելով իր նոր ստեղծագործութիւնը՝ «Իսթանպուլ» վէպը, թուրք գրողը ասաց, որ ապրել է Իսթանպուլի արեւմտեան՝ եւրոպական մասում, իր դպրոցում շատ էին հայ եւ յոյն աշակերտները, եւ ինքը նաեւ նրանց մասին է գրել իր գրքում: 2005 թուականին շվեյցարական թերթերից մէկին տուած հարցազրոյցում Օրհան Փամուկը ասել էր, թէ Օսմանեան կայսրութիւնում մէկ միլիոն հայ է սպանուել, ինչից յետոյ թուրքիայում նրան քրէական մեղադրանք էր ներկայացուել «թուրքական ինքնութիւնը վերաւորելու»: համար: Աշխարհի բազմաթիւ յայտնի արուեստագէտներ եւ գործիչներ հանդէս են եկել ի պաշտպանութիւն թուրք գրողի:

ԹՈՒՐԲԻԱ - ԶԱՅԱՍԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակուած էջ 1-էն
նակցութիւնները ակնյայտօրէն փեկում չեն յառաջացուցած, բայց նոյնիսկ այն փաստը, որ կողմերը կը բանակցին, ինքնին խօսուն է»:
«Թուրքիոյ Չանքերու յաջողութիւնը կախուած է Երեւանի ձկուն դիրքորոշումէն, նաեւ երկկողմանի եւ տարածաշրջանային խնդիրներու լուծումէն», - ըսած է Նամիկ Թան, աւելացնելով՝ - «Թուրքիան մտադիր է Չանքեր գործադրել Հայաստանի հետ յարաբերութիւնները բնականոն դարձնելու նպատակով»:
Հայաստանի Արտաքին Գոր-

ծոց նախարարութեան խօսնակի պաշտօնակատար Վլադիմիր Կարապետեան, մեկնաբանելով Անգարայէն ստացուած տեղեկատուութիւնը, «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է. - «Շփումներ թուրքիայի արտգործնախարարութեան հետ միշտ էլ եղել են: Ապագայ բանակցութիւնների մասին այս պահին որեւէ բան հնարաւոր չէ ասել»:
Նամիկ Թանը յիշեցուցած է, որ հայ-թրքական բանակցութիւնները սկսած էին, երբ 2005 թուականի Ապրիլին թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրդողան եւ Ռոբերդ Քոչարեան նամակներ փոխանակեցին:

ՉԵՐԲԱԿԱԼՈՒԵԼ Է ԼԵՒՈՆ ՉԱԽՄԱԽՉԵԱՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ռուսաստանի Դաշնութեան խորհրդում կալմիկիայի Հանրապետութեան խորհրդարանը ներկայացնող Լեւոն Չախմախչեանը ձերբակալուել է 300 հազար դոլար կաշառք վերցնելիս, հաղորդում են ռուսաստանեան լրատուամիջոցները: Անվտանգութեան դաշնային ծառայութեան աշխատակիցները Չախմախչեանին ձերբակալել են Յունիսի 2-ին եւ նրա պալուսակում յայտնաբերել են նշուած գումարը: Ի դէպ, թղթադրամները նշուած են եղել յատուկ նիւթով: Այդ կերպ իրաւապահները ստուգում էին ստացուած ինֆորմացիան, համաձայն որի չինովնիկները մեծ չափի կաշառք են վերցնում, որպէսզի ՌԴ Հաշուիչ պալատի թղթերից հանուեն որոշ ստուգումների արդիւնքները:
Ի դէպ, Լեւոն Չախմախչեանից առգրաւուած գումարը կաշառքի ընդամենը մի մասն է, մնացածը պէտք է փոխանցուէր բանկային հաշուին: Իսկ կաշառքի ամբողջ գումարը պէտք է կազմեր 1,5 մլն

դոլար: Ինքը՝ Լեւոն Չախմախչեանն, իր հերթին պնդում է, որ գումարն իրենը չէ եւ ինքը նոյնիսկ ձեռք չի տուել այդ փողերին: Բացի այդ Չախմախչեանը յայտարարել է, որ եղածը «սադրանք է, որը կազմակերպել է Ռուսաստանի ավիարընկերութիւններից մէկի նախագահը»:
Ռուսաստանի Գլխաւոր դատախազութիւնում հաստատել են, որ գումարն առգրաւուել է ոչ թէ անձամբ Լեւոն Չախմախչեանից, այլ ձերբակալման պահին եղել է Չախմախչեանի հետ նստած երկու անձանցից մէկի մօտ: Ի դէպ, Չախմախչեանից բացի, Հաշուիչ պալատում մեքենայութիւնների գործի առնչութեամբ ձերբակալուել է նաեւ նրա փեսան, որը, սենատորի ասելով, Հաշուիչ պալատի աուդիտորի օգնականն է: Իրաւապահ մարմինները դիմել են սենատոր Լեւոն Չախմախչեանի անձեռնմխելիութիւնը ժամկէտից շուտ դադարեցնելու առաջարկով, այն բաւարարուել է:

ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ Է «ԱՐՄԵՆՏԵԼ»-Ի ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ռուսաստանեան MTC ընկերութիւնը մտադիր է ձեռք բերել «ԱրմենՏել»-ի բաժնետոմսերի 90 տոկոսը, որը պատկանում է յունական OTE ընկերութեանը:
Ռուսաստանի ամենախոշոր բՆԳՅԱԿԻՆ հեռախօսակապի օպերատորը յայտ է ներկայացրել «ԱրմենՏել»-ի բաժնետոմսերի վաճառքի մրցոյթին մասնակցելու համար: Այս տեղեկութիւնը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հեռախօսագրոյցում հաստատեց MTC ընկերութեան խօսնակ Կիրիլ Ալիարդինը:
Մրցոյթին առնչուող մանրամասների մասին այլ տեղեկութիւնները, ըստ Ալիարդինի, յայտնի կը լինեն աւելի ուշ:
Ռուս փորձագէտները, յիշեցնենք, «ԱրմենՏել»-ի բաժնետոմսերի 90 տոկոսը (բաժնետոմսերի մնացած 10 տոկոսը տնօրինում է Հայաստանի կառավարութիւնը) գնահատուած է մօտ 140 միլիոն ԱՄՆ դոլար:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԶԱՅՈՑ ԵՂԵՈՆԻ ԹԵՄԱՅՈՎ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Այս օրերին ամերիկեան մամուլի էջերում շարունակուած է Հայոց ցեղասպանութեան թեմային անդրադարձը: 2006թ. մայիսի 17-ին «Նյու-Եորք Թայմզ» օրաթերթում իմբազրական լոյս տեսաւ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ, որում, մասնաւորապէս, քննադատում էր թուրքիայի ժխտողական քաղաքականութիւնը, որը, ըստ թերթի, կասկածի տակ է դնում թուրքիայի՝ Եւրոմիութեան անդամակցելու նպատակաշարմարութիւնը:
Մայիսի 24-ին օրաթերթում տպագրուեց ԱՄՆ-ում թուրքիայի դեսպան Նաբի Սենսոյի գրութիւնը, որում թուրք պաշտօնեան, այլ վիճաբարոյց մտքերի հետ նշում է, որ Յեղասպանութեան փաստն ապացուցելու իրաւական հիմքեր չկան, իսկ պատմական հետազօտութիւնները բաւարար չեն:
Արձագանքելով թուրք պաշտօնեայի նամակում պարունակուող իրարարմերժ պնդումներին, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Թաթուլ Մարգարեանը նամակ է յղել «Նյու-Եորք Թայմզ» օրաթերթին, որը լոյս է տեսել մայիսի 31-ի համարում: ԱԳՆ լրատուական ծառայութիւնն տարածել է նամակն ամբողջութեամբ:
«Չնայած ԱՄՆ-ում թուրքիայի դեսպանի վիճաբարոյց պնդմանը, որ պատմութիւնը պէտք է թողնել պատմաբաններին, թուրքիայի իշխանութիւնները պատմութիւնը նախապայման են դարձնում Հայաստանի հետ բնականոն միջպետական յարաբերութիւններ հաստատելու հարցում»:

ԶԱՅԱՍԱՆ ՏԻՐԱՅԱԻ ՇԱԽՄԱՏԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն
ղեկութիւններուն եւ կ'ակնկալէր նման յաղթանակ:
Մինչ այժմ Հայաստանի հաւաքականը մի քանի անգամ արժանացած էր Ողիմպիականի պրոնզին, իսկ մէկ անգամ ալ Եւրոպայի իմբաքին առաջնութեան:
Հայաստանը կը ներկայացնէին շախմատի վարպետներ՝ Լեւոն Արոնեան, Վլադիմիր Յակոբեան, Կարէն Ասրեան, Գաբրիէլ Սարգսեան, Սմբատ Լպուտեան եւ Արտաշէս Մինասեան, մարզիչ Տիգրան Նալբանդեանի գլխաւորութեամբ:

**Ս.Դ.ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԿ. ՍԵԴՐԱԿ ԱԾԵՄԵԱՆԻ
ՅԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ**



ԸՆԿ. ՍԵԴՐԱԿ ԱԾԵՄԵԱՆ ԱՆՔԻՂԻՍԱԿԻ ՎԵԽԱՐԱՆԷՆ ԸՆԵՐՍ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԻՆՏ. ԱԶԻՆ ԸՆԿ. ՓՕՂԱՏԵԱՆ



ՄՈՒԽՔԱՐԱՅԻ ԱՎԱՏԱՏԷՆ ԸՆԵՐԱ ԴԱԽԵՆ ԱՅ՝ ԱԿԻՐՈՆ ՇԻՐԱՐԱՆՄԵԱՆ, ՈւՂԻՍ ԶՈՆԱՊՈՒԼՅԱՔ, ՍԵԴՐԱԿ ԱԾԵՄԵԱՆ ԵՒ ՄԱՍԿԱԿ ՓՕՂԱՏԵԱՆ

Մալխիսի վերջերուն կուսակցական կազմակերպչական հարցեր քննարկելու նպատակով Լիբանան ալցելեց Ս.Դ.Յ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեան: Կեցութեան ընթացքին Ընկ. Աճէմեան հանդիպումներ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ Հայրապետի եւ Ընկերվարական Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար Ուալիտ Ճոնպուլաթի հետ:

Մալխիս 23-ին Անթիլիասի Կաթողիկոսարանէն ներս Արամ Ա. ընդունեց Ընկ. Աճէմեանին, որուն կ'ընկերակցէր Ընկ. Տօքթ. Մալխիսի Փօլատեան:

Աւելի քան ժամ մը տեւող հանդիպումի ընթացքին, Կեդրոնական Վարչութեան Ատենապետը վեհափառին պարզեց Կուսակցութեան մօտեցումները Հայաստանի, Հայաստան-սփիւռք յարաբերութեանց եւ Հայ Դատի առնչուած հարցերու գծով՝ Կուսակցութեան վերջերս կայացած Համագումարի որոշումներու լոյսին տակ:

Վեհափառը իր գնահատանքը յայտնեց Հնչակեան Կուսակցութեան կատարած աշխատանքներուն՝ ի խնդիր Հայաստանի հզօրացման, Հայ Դատի հետապնդման ու սփիւռքի գաղութներու աշխուժացման:

ՄԵՆԹԱԼԻՏԵՏԻ ՎԿԱՆԵՐԸ

ՅԱԿՈՒԲԱԴԱԼԵԱՆ

«Եւ եթէ մենք չենք կարողանայ փոխել բնակչութեան մենթալիտետը, եւ վերաբերմունքը խնդիրների հանդէպ, ապա մեր հասարակութեան մէջ չեն աշխատի նոյնիսկ ամենալաւ օրէնքները»: Սա մի արտայայտութիւն է ՀՀ Մարդու իրաւունքի Պաշտպան Արմէն Յարութիւնեանի պատկերացումներից, որ նա հանրութեանն է յայտնել Մալխիսի 31-ի, երբ նշում էր Մարդու իրաւունքի Պաշտպանի պաշտօնում գտնուելու 100 օրը: Արմէն Յարութիւնեանը իր այդ պատկերացումով թերեւս ոչ թէ հարիւր, այլ մի քանի հարիւր հազար օր կը գտնուի այդ պաշտօնում: Եւ ընդհանրապէս, այդ պատկերացումով կարելի է չաւերժական տեղ գրառել Հայաստանի իշխանական համակարգի ցանկացած կէտում, իւրաքանչիւր աթոռի վրայ, քանի որ հենց այդ պատկերացումը հասարակութեանը ներարկելով է իշխանութիւնը լուծում իր չաւերժութեան խնդիրը: Եթէ անօրինական ընտրութիւնը պաշտպանութեան նախարարը բարդում է ազգային մենթալիտետի վրայ, ապա ինչ պէտք է անի Մարդու իրաւունքի Պաշտպանը իր պաշտօնավարումը շարունակելու համար: Եւ ընդհանրապէս, ինչ պէտք է անի իշխանութիւնը, եթէ մեր կեանքի բոլոր ապօրինի թիւերի մայր պատճառ հնչակի մենթալիտետը: Ուրիշ ինչ կերպ պէտք է արդարացնեն կաշառակերութիւնը, կեղծուած ընտրութիւնները, հարկեր չվճարելը:

Բայց պէտք է նկատել, որ նոյն այդ արդարացումն արդէն յանցանք է, քանի որ իշխանութիւնն իր անօրինականութիւնները փորձում է բարդել հասարակութեան մտածելակերպի եւ աշխարհընկալման վրայ: Եւ հասարակութիւնն էլ իր հերթին է յանցանք գործում, այդ ամէնը լսելով ու թողնելով անարձագանք: Թողնելով, որպէսզի իրեն վերածեն իշխանութեան արդարացման: Իսկ դրա նպատակը պարզ է՝ հասարակութեան գիտակցութեան մէջ արմատաւորել այն մտայնութիւնը, որ պէտք է մենթալիտետը փոխել, եւ ամէն ինչ կախուած է մենթալիտետից: Առանձին առանձին հասարակութեան ամէն մի անդամ անկասկած մտածում է, որ ինքն այդ մենթալիտետի կողմը չէ, բայց նաեւ համոզում է, որ մնացեալը այդ մենթալիտետի գոհն են, եւ միայն իրենով ոչ ինչ չի լուծուի, քանի որ մենթալիտետը մնում է նոյնը: Եւ այդ առումով մարդու իրաւունքի պաշտպանը փաստօրէն իր գործունէութեան հարիւր օրերի ընթացքում իւրացրել է իշխանական համակարգի գլխաւոր սկզբունքը: Իսկ մնացեալն արդէն տեխնիկայի հարց է, մանր խնդիրներ, որ կարելի է լուծել, նոյնիսկ երբեմն հասարակութեան օգտին: Իշխանութիւնը այդպիսով նոյնիսկ կարող է ուղղակի խրախուսել իր այն պաշտօնեաներին, ովքեր կարողանում են ըմբռնել գլխաւոր խնդիրը եւ առաջ տանել այն, նոյնիսկ որոշ բաներ փոխելու ճանապարհով, միայն թէ մենթալիտետը չփոխուի:

Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ, - «Երեք կուսակցութիւնները սփիւռքի մէջ կատարեցին առանցքային դեր Յեղասպանութենէն ետք՝ սփիւռքի կազմաւորման, հայապահպանման ու մեր ժողովուրդի իրաւունքներու հետապնդման ծիրէն ներս»: Նոյն օրը, Ընկ. Աճէմեան ընկերակցութեամբ ընկ. Փօլատեանի եւ Ընկ. Ահարոն Շիրազմեանի ալցելեցին Ընկերվարական Յառաջդիմական ղեկավար Ուալիտ Ճոնպուլաթին, Մուխթարայի պատէն ներս:

Քննարկեցին Լիբանանը լուրջ աջակցութեամբ կարեւոր նկատուեցաւ երկու կուսակցութիւններու միջեւ մնայուն կապի հաստատումը: Ուալիտ Ճոնպուլաթ մեծապէս գնահատեց լիբանանահայութեան կարեւոր դերը երկրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային մարզերէն ներս զարգացման գծով: Պատուիրակութեան անդամները ծաղկեպսակ գետեղեցին նախատակ Բամալ Ճոնպուլաթի դամբարանին եւ ապա ճաշի հիւրը եղան Լիբանանցի ղեկավարին:

Չեր Ծանուցումները վստահեցէք «Մասիս» շաբաթաթերթին

A.B.A. INSURANCE SERVICES

Authorized Agent CA Insurance Lic. # 0494056
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association

1975-2005
30th ANNIVERSARY

E-mail: BMaronian@AOL.com

INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

BEDROS, SIAMANTO MARONIAN

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՌԻՉԱՐԴ Գ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՎԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԸՇ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, Ը.1, ԵՐԵՒԱՆ, 2005, 570 ԷԶ

Ա.Լ.ԲԵՐՏ ԽԱՌԱՏՆԱՆ
(Պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր)

Հրապարակի վրայ է ակնաւոր պատմաբան, պրոֆ. Ռ. Գ. Յովհաննիսեանի քառահատոր աշխատութեան առաջին հատորը հայերէն լեզուով: Իբրեւ դարակազմիկ աշխատութիւն, այն ունի իր իւրաքանչիւր ճակատագիրը. հատորն անգլերէն լեզուով լոյս է տեսել դեռեւս 1971 թ., Կալիֆոռնիայի (ԱՄՆ) համալսարանի հրատարակութեամբ, մինչեւ 1996 թ. նոյն լեզուով հրատարակուել են քառահատորի միւս գրքերը եւ միայն գրեթէ տասը տարի անց է, որ հայ ընթերցող լայն հասարակութեանը յայտնի է դառնում այս աշխատութեան առաջին գիրքը:

Անկախ աշխատութեան տասնամեակների պատմութիւնից, այն պահպանում է իր հրատապութիւնն ու կարեւորութիւնը նաեւ այսօր եւ ահա թէ ինչու: Հայաստանի առաջին հանրապետութեան պատմութիւնը, ինչպէս եւ դրա գիտական ուսումնասիրութիւնը, եւ սա բոլորիս է յայտնի, երկար ժամանակ արգելուած թեմա էր խորհրդային պատմագիտութեան մէջ, եւ եթէ անգամ չիշուէր այդ պատմութիւնը, ապա միայն քամահրանքով ու կանխակալ որակումներով: Քաղաքականացում եւ քարոզչական մտտեցումը դարձել էին արգելապատնէ՜լ՝ այս աշխատութեան եւ Հայաստանի ընթերցողի միջեւ: Այսօր այդ ամէնը մնացել են պատմութիւն դարձած անցեալում, եւ փաստական իրողութիւնը աշխատութեան հայերէն ծնունդն է:

«Հայաստանի Հանրապետութեան» սոյն հատորը խոշոր կտակի պատմագիտական գործ է՝ այն ընդգրկում է հայոց անկախ պետականութեան վերածնութեան 1918-1919 թթ. ժամանակաշրջանի պատմութիւնը: Այս կարճ ժամանակահատուածը, այնքան կարեւոր ու ճակատագրական հայ ժողովրդի գոյապահպանութեան եւ նրա պատմական ընթացքի տեսակէտից, յագեցած է իրադարձութիւնների եւ աշխարհաքաղաքական վերիվայրումների ապշեցուցիչ հարստութեամբ, յաճախ դրամատիկ անսպասելի բեկումներով, յատկապէս ոչ մեծաքանակ ժողովուրդների համար, ինչպիսին մերն է, քաղաքական, տնտեսական ու ռազմական զարմանալի շրջադարձերով: Իրարամերժ ու հակասական իրադարձութիւններով յագեցած պատմական այս ընթացքի մէջ հայ ժողովուրդը ներդնում էր իր հաւաքական կամքի եւ գոյատեւելու իրաւունքի տրամաբանութիւնը: Ռ. Յովհաննիսեանին լիուրի յաջողուել է ցոյց տալ պատմական այս գործընթացն իր շարժման եւ ամբողջ բովանդակութեան մէջ, եւ այս յաջողութեան մէջ պէտք է տեսնել, կարծում ենք, այս գրքի կայացումն ու պատմագիտական հմայքը:


Իր աշխատութեան պատմական կառուցը հեղինակը ստեղծել է խորապէս կշռադատուած հիւսուածքով, պատմական նիւթի գիտական ձեւաւորման մէջ ամբողջի եւ բաղադրամասերի համոզիչ համամաս-

նութեամբ ու շարայարուժով: Այս պատճառով էլ աշխատութեան մէջ արծարծուած թեմաների վիթխարի բազմազանութիւնը հեղինակի գրչի տակ վերածուել է գիտական կուռ ամբողջականութեան եւ համակարգուած կառուցի: Պատմաբանը հմտաւրի քննութեան է ենթարկել ժամանակաշրջանի եւ Ռուսական նախկին կայսրութեան տարածքի ժողովուրդների բազմաթիւ հիմնահարցեր՝ սկսած Փետրուարեան յեղափոխութեան (1917), Հայաստանի հանդէպ ժողովուրդի վարած քաղաքականութեան, Անդրկովկասեան կոմիսարիատի եւ Սէյմի ստեղծման, օսմանեան թուրքերի հետ անդրկովկասեան ժողովուրդների ռազմա-քաղաքական յարաբերութիւններից եւ վերջացրած անկախութեան ուղին բռնած Հայաստանի ծայրայեղորէն բարդ ներքին ու արտաքին իրավիճակների բացալայտումներով: Այս աշխատութեան մէջ առաջին անգամ են տրուում պատմագիտական ստուար շերտեր կազմող բազմաթիւ հիմնահարցերի առաջադրումներ եւ լուծումներ, որոնք էլ, ըստ էութեան կազմում են նրա գիտական նորոյթը: Նշուած են բոլոր հիմնահարցերը ներհիւսուած են միմեանց՝ ներքին կապերով ու յարաբերութիւններով, բիւռւ են մէկը միւսից՝ լրացնելով ու ամբողջացնելով հեղինակի մտադրոյթը, այն է՝ ներկայացնել Հայաստանի մանուկ հանրապետութեան կառավարութեան ձեւաւորման ու գործունէութեան, ներքին ու արտաքին քաղաքական յարաբերութիւնների, թուրքական ռազմա-քաղաքական ճնշումների, Ռուսաստանի կարմիր եւ սպիտակ բռնկումների միջեւ խուսանաւելու, միջազգային հանրութեան մէջ իր համեստ տեղը գրաւելու հակամէտ Հայաստանի ջանքերի ողջ պատմութեան վերարտադրութիւնը: Այսօրուայ Հայաստանի Հանրապետութեան համար որպէս պատմական ուսանելի դասերի հանրագումար կարող են լինել Ռ. Յովհաննիսեանի պատմա-քննական վերլուծութեան այն հիմնախնդիրները, որոնք վերաբերում են հայ-ուսական, հայ-թուրքական, հայ-ադրբեջանական, հայ-վրացական, ինչպէս եւ արեւմտեան տէրութիւնների հետ Հայաստանի ռազմա-քաղաքական ու դիւանագիտական յարաբերութիւններին: Մնում է արժանին հատուցել նաեւ պատմաբանին այն նուրբ դիտարկումների համար, որ նա անում է Լեւոնյին Ղարաբաղի, Ջանգեզուրի եւ Նախիջեւանի 1918 թ. պատմութեան՝ գրեթէ մոռացութեան տրուած ծալքերը լուսաբանելու եւ արժէքաւորելու ուղղութեամբ:

Աշխատութեան մէջ ամէնուրեք զգացում է հեղինակի յոյժ ու շարժիչ հայեացքը՝ ուղղուած իր բացալայտած իրականութեանը, մարդկանց, դէպքերին եւ իրադարձութիւններին: Երբեք չկարուելով փաստերն ու տուեալները անկողմնակալ ու հիմնաւորապէս վերլուծողի եւ եզրակացնողի իր հետազօտական ընթացքից, Ռ. Յովհաննիսեանը ստեղծել է ուսումնասիրողի անկրկնելի մի ոճ, իւրաքա-

տուկ ջերմութեամբ շնչող աշխատանք, որ կարող էր մատչելի լինել միայն ճշմարիտ ու նրբազգաց հայրենասէրին, իր ժողովրդի ճակատագրին հետամուտ եւ նրանով ապրող ու հպարտացող նուիրեալ մտաւորականին: Այս առթիւ արժէ յիշատակել ներքին խորը դրամատիզմով ու լարուածութեամբ բնութագրուող՝ աշխատութեան այն բազմաթիւ հատուածները, որոնք վերարտադրում են հանրապետութեան առաջին ձմեռուայ դժուարութիւնները, զաղթականների, սովի ու համաճարակների բազմակնճիւռ խնդիրները, ժողովրդի համար կենսական նշանակութիւն ունեցած ամերիկեան տնտեսական օգնութիւնը (համապատասխան կառուցների գործունէութեան բարեխիղճ լուսաբանումներով), հանրապետութեան կառավարման բարդութիւնները, Կարսի մարզի միացումը եւ այլն: Ռ. Յովհաննիսեանը քայլ առ քայլ վերարտադրում է հանրապետութեան 1918 թ. Մայիս - 1919 թ. Օգոստոս ժամանակահատուածի ամբողջ պատմութիւնը իր կարեւոր ուղղութիւնների, դրանք բնութագրող ու լուսաբանող մանրամասների մէջ՝ դառնալով այդ պատմութեան անխոնջ ու անաչառ տարեգիրն ու գնահատողը:

Աշխատութիւնը գրուած է եւրոպական մի շարք լեզուներով հրատարակուած, ինչպէս եւ հայերէն, ռուսերէն ու թուրքերէն ստուարածաւալ աղբիւրների ու գրականութեան հէնքի վրայ: Իր բազմաբովանդակ ընդգրկումներով այն մնում է ցօրս անգերազանցելի աշխատութիւն՝ Հայաստանի առաջին հանրապետութեան պատմութեան գիտական լուսաբանութեան տեսակէտից: Ռ. Յովհաննիսեանի այս աշխատութիւնը, յիւրաւի, Հայաստանի անկախ հանրապետութեան պատմութեան գիտական իւրացումն է, որը նշանակալիորէն առաջ է



մղում հայ պատմագիտական միտքը, եւ որի նշանակութիւնը դժուար է գերազնահատել իր անչափելի ճանաչողական արժէքի եւ թեմայի յետագայ գիտական անդրադարձումների հիմաստով:

Իբրեւ գրքի խմբագիր, կը ցանկանայի յատկապէս առանձնացնել հեղինակի հետեւողականութիւնը հիմնախնդիրները վերլուծելու եւ սպառելու գործում, նուրբ ու պատկերաւոր լեզուամտածողութիւնը եւ շարադրանքի ակնառու հմտութիւնը (որ անվիճելի են բնագրում, իսկ հայերէն թարգմանութեան կտրուածքով՝ թողնում ենք ընթերցողի լայնախոհութեանը), որոնք իսկական դպրոց կարող են լինել առանձնապէս մեր երիտասարդ պատմաբանների համար:

Կարելի է անվարան ասել, որ պրոֆ. Ռ. Յովհաննիսեանի «Հայաստանի Հանրապետութիւն» աշխատութեան առաջին գրքի հայերէն հրատարակութիւնը յաջողութեամբ գլուխ է բերուել: Մասնագէտները եւ ընթերցող լայն շրջանները սպասում են աշխատութեան յետագայ վերադարձին հայրենիք՝ յաջող հատորների հայերէն հրատարակութեանը:

ԱՉԳՎՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

Հ.Մ.Ս. ՀՈՄԵՆՄԵՆ 1921

Նուիրում՝
20 ԿՎԽԱԿՂՎՆՆԵՐՈՒՆ

Կազմակերպութեամբ՝
Հ.Մ.Ս.-ի Խնամակալ Մարմնի

Կատարողութեամբ՝
Սիրում Երգիչ՝ Հրաչ Պողարեանի

8 Յուլիս 2006
Երեկոյեան ժամը 8:30-ին
Հ.Մ.Ս.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena

Մուտքի Գուեր՝ **\$50.00**
Նեղարեալ Մաշ

Հ.Բ.Ը.Մ. ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՆՋՈՒԳԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔԶՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ

Մարդկային հասարակության մեջ, ո՞վ է Աստուածահաճոյ մարդը, որ կրնայ սիրտերը համագրաւել եւ ճաճանչել յաւերժօրէն սերունդներուն կեանքին մէջ իր բազմաճառագայթ ձիրքերով եւ առաքինութեան ցոլացումը տալ իր շնորհազարդ կերպարին:

Ինծի համար անհամեմատելի մեծութիւնը, ո՛չ հանճարեղ գիտնականն է, ո՛չ ներհուն մտաւորականը, ո՛չ դափնեկիր քերթողը, ո՛չ մաքրակրօն հոգեւորականը, ո՛չ ամենագոր աշխարհակալը, ո՛չ ոսկեկշիռ միլիոնատէրը եւ ո՛չ ալ խոնարհներուն մէջ խոնարհագոյն մարդը:

Անվիճելի ու արեւափառ մեծութիւնը, այն ողորմած Սամարացին է, որուն զթառատ սիրտը կը սրտփէ անասելի զրկուածութեան մէջ նահատակուած ժողովուրդին փրկութեան համար:

Բարեգործութիւնը՝ խղճահար մարդուն հոգիին երկնային շքանշանն է, որ յաւիտեաններուն մէջ կ'երաշխաւորէ իր փառքը:

Աւետարանին ընչաքաղց մեծատունը, վաղաժամ կեանք ունեցաւ երկրի վրայ, որովհետեւ չուզեց լսել Աստուծոյ ոսկեբերան պատգամները եւ ապրեցաւ իր մարմնոյն անյազուրդ ցանկութիւններով:

Այս միջանկեալ խորհրդածութիւններէն ետք, հետաքրքրական է գիտնալ, թէ հայ սրտփող իրականութեան մէջ, ուր այնքան երեւելի մարդիկ կան, եւ անոնցմէ ոմանք միջազգային չափանիշով աշխարհաճանաչ անուններ են, հարցնենք՝ ո՞վ է այն հասարակաց զգացումէն բարացուցուած բարոյական մեծութիւնը, որուն սրտին մէջ արմատացած գոհողութիւնը կը բաբախէ հայրութեան բարեոյն ու բարօրութեան համար:

Այս գրութեան վերեւ՝ ազգին գերընտիր զաւկին անունը գեղաճաճանչ կ'երեւայ՝ ԱԼԷՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ, անզուգական դաստիարակը բարեգործութեան:

Հայրութեան ու հայրենիքին ընտրելագոյն զաւակներէն մէկը, որ շատերէն մէկը չէ, այլ բացառապէս բացառիկ մէկը, որ երկար հոլովոյթով՝ աշխարհ կը ժամանեն երկնքէն առաքուած:

Այս գրութեան նպատակը, աննման բարերարին շարունակական բարիքներուն թուումը ընել չէ, որ իր մահէն ետքն ալ դադար չէ առած, այլ իր բարացուցական բիւրեղացած ձիրքերուն հրապարակային ցոլացումով՝ կը ջահաւորէ հոգիները, որ անոնք եւս՝ գոհողութեան բարձրագոյն պատնէչներու վրայ, հերոսավայել ցուցաբերեն զթութիւնը՝ հայ նահատակ ժողովուրդին:

Սովորական երեւոյթներ դարձած են, որ հանրային ամպիրոններէն շուրջօրէն դրուատուին արժանաւորներու չափանիշով՝ գովեստի մուրացկանները իրենց փանաքի նուիրատուութիւններով...: Չեն հասկնար այս անպատասխանատու մարդիկը որ իրենց պոռոտ գովեստներով կը խոցեն արժանաւորներու համեստութիւնը:

Մարդիկ՝ լայնատարր գարգացումով՝ դրամի սիրոյն՝ այն աստիճան անասնացած են, որ Փրօֆէսորի տիտղոսները աճուրդի հա-

նած են՝ բարեմիտ վաճառականներու սրտին մէջ սնուցանելու անպարծութեան... մեղքը:

Ալէք Մանուկեան պատմութեան հմուտ ուսուցչի մը կարողութեամբ լաւ կը ճանչնայ իր ժողովուրդին փառապանծ դէմքերը, որոնք յաւերժութիւնը նուաճած են իրենց ազգային եւ քրիստոնէական առաքինութիւններով: Գիտէ թէ ի՞նչ ուղղութեամբ կու գան յաջողութիւնները եւ ի՞նչ ճանապարհով կը յանգին ձախողութիւններու: Իր իմաստուն ու փորձառու գործավարի համոզումն է, թէ մարդու մը բարոյական վարկը եւ որակը կը կորսուին անիրաւ շահերու մէջ, նման ովկիանոսներու մէջ թափող գետերուն:

Ճշմարտութիւնը՝ իր բոլոր լուսավառ տառերով եղաւ իր հոգիին աստուածային արտայայտութիւնը: Փառքը հետեւեցաւ իր լուսաւոր ստուերին եւ յաւերժացուց իր յիշատակը յաւիտեաններու մէջ:

Ժամանակը՝ առիթը չէր ընծայած, որ անձամբ տեսնեմ, այս անհամեմատելի բարեգործը, որ հրաքանչ տարածք գրաւած էր հոգիին մէջ, իր թողած երախտագած տալուութիւններով:

Քահանայ էի, եւ կը խորհէի դիւրաւ վրիպիլ իր ուշադրութենէն՝ զինք շրջապատող մարդոց բազմութեան մէջ, որոնք պատ կը բարձրացնէին ուրիշներու առջեւ, որ չմօտենան եւ արգելք չըլլան իրենց փառասիրական շփումներուն:

Օր մը, գնահատագիր երկտող մը ստացայ իր ձեռագրով, որ երջանիկ անակնկալ մըն էր, իր թանկագին բառերով համեստ գրավատակիս գնահատուիլը:

Տարի մը վերջ, ուրիշ գնահատագիր նամակ մը՝ մեքենագրուած եւ շարադրուած հաւանաբար, իր քարտուղարին, գրականագէտ եւ հանրաճանաչ հրապարակագիր Երուանդ Ազատեանի կողմէ, որ քանի մը օրուան համար գիտ Տիթրոյիդ կը հրաւիրէ:

Այս բարեբախտ հանդիպումը, որ յիշատակներուս մէջ փառահեղ տեղ կը գրաւէ, այնպիսի գնահատանք մըն է, քահանայական ստուերներու մէջ սքողուած անձիս, մինչեւ այսօր, դարամերձ տարիքիս հպարտօրէն կը շոյճեմ զգայնութիւնս:

Երկու գիրքերուս հրատարակութեան մեկենասը եղաւ Երուանդ Ազատեանի բարեհաճ կարգադրութեամբ:

Իր վշտալի մահով՝ դադրեցան մեր հեռաձայնային խօսակցութիւնները, որ ուրախութեան անստգիւտ պահեր էին ինծի համար:

Երկու լուսապայծառ տիտանեան կերպարներ՝ իրենց յաւերժալոյս փառքով՝ Չահաւորեցին ամբողջ կեանքս:

Առաջինը՝ հայաշինջ ցեղասպանութեան աննման վրիժառուն՝ Սողոմոն Թեւլիբեան, որուն դադարին վրայ խօսելու նախապատուութիւնը ինծի վիճակուեցաւ իր ազնուասիրտ տիկնոջ Անահիտին փափաքով եւ երկրորդը՝ Ալէք Մանուկեանի կողմէ գնահատուած ըլլալու պատիւը:

Երկու ազգընտիր դիւցազնական՝ անմահացած ՀԱՅՈՐԴԻՆԵՐ,

որոնք հայ ժողովուրդի խղճմտանքէն փառաւորուած, իրենց մահուան թուականներով՝ որքան սուգունին անցեալի վիճային խորութիւններու մէջ, չի առուերոտիր անոնց անանց փառքը:

Շուետիոյ թագաւորը, երբ կը տեսնէ, որ գինուորները ռազմադաշտը կը լքեն ու խուճապահար կը փախչին, ձիէն վար իջաւ եւ կանչեց զանոնք:

- Ո՞ւր կը փախչիք վախկոտներ, ըստ մը կանգ առէք, որ տեսնէք, թէ ի՞նչպէս ձեր թագաւորը հերոսավայել կը մեռնի:

Այս խրախուսական խօսքերը լսելով, գինուորները վերադարձան ճակատ եւ դիւցազնական դիմադրութենէ ետք, թէեւ թշնամին պարտուած նահանջեց՝ բայց թագաւորը ծանրապէս վիրաւորուած, պահ մը յետոյ աւանդեց հոգին:

Չոհողութեան գերագոյն օրինակը տուին մեր վերոգրեալ երկու հերոսները իրենց հայանուէր անձնագոհողութեամբ:

Յետագայ բանաստեղծութիւնը կը նուիրեմ Բարեգործականի հարիւրամեակին առթիւ, Ալէք Մանուկեանի ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ:

ՓԱՌՔ ԱԼԷՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՅԱԿԵՐԺԱԼՈՅՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ուր որ կարիք կայ հացի եւ լոյսի, Գանձերը հոգւոյդ կը սփռես առատ. Ուր որ արցունք կայ՝ սիրտդ կը սարսի, Դուն գթութիւնն ես, անժիր, անարատ: Բարեգութ Աստուած կը հետեւի քեզ, Երբ կը հալածես քաղցը յարածամ. Աստղը երկնային անձիդ վրայ հեզ, Կը ճառագայթ գերք շքանշան: Ինչպէս գրոհող գորքին առջեւն, Շուար խոյս կու տայ երկչոտ թշնամին,



Աղքատութիւնն ալ շուքդ լուսեղն, Կը նահանջէ իր սահմանը մին:

Եւ խոստումները վաղուան հայրութեան, Շնորհիդ փայլը իրենց ճակատին, Պիտի ճաճանչեմ կարեկցութեամբ միշտ, Ուր որ աւեր կայ՝ նեղութիւն ու վիշտ:

Աշոտ Ողորմած ու Մեծն Ներսէս, Եղան մեծագործ՝ բարերար քեզ պէս, Չոհուեցան հայու հոգիով վսեմ, Որ փայլ տան Ազգին վիճակին նսեմ:

Տուիր հայրութեան անցողականը, Տէրը շնորհեց յաւիտեանականը. Տուիր աղքատին յուռթի երկիրը, Աստուած տուաւ քեզ ամբողջ երկինքը:

Բազմաճառագայթ կը ժպտիս մեզի, Օթեւանդ սուրբ մշտնջենական, Ով հոգի անմահ, յաւետ փառք քեզի, Մեծ Դաստիարակ բարեգործութեան:

Այսօր յիշատակի տօնն է Միութեան, Հարիւրամեակը Բարգործութեան, Երկինքէն երկիր մեր կեանքին վերեւ, Ճաճանչէ որպէս, անստուեր արեւ:

ՄԱՍԻՍ

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to
Massis Weekly**

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
*** \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.**
*** \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.**

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՐԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՍԼՈՅ ԸԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայկական ձարտարապետութիւնն ուսումնասիրող (ՀՃՈՒ) կազմակերպութիւնը, հիմնադրուած 1972 թուականին, հայկական եւ օտար հաստատութիւնների կողմից արդէն իսկ ճանաչուած է որպէս կենսական եւ իր առաքելութեան՝ Հայկական Պատմա-Մշակութային Ժառանգութիւնն ուսումնասիրելու եւ փաստագրելու մէջ բարձր արդիւնատուութեան հասած գիտա-հետազոտական կեդրոն:

Այսօր, ՀՃՈՒ-ի փաստագրութիւնների հակայաճախելի դիւանան արժանի իր տեղն ունի հայ ազգի օրրանում բնիկ ժողովրդի կերտած մշակութիւն փաստող գիւնանոցում, լուռ, սակայն անժխտելի ապացոյցներ հայ ժողովրդի պատմական իրաւունքների գեղձողների եւ ժխտողների դէմ:

Հայ իրականութեան մէջ ՀՃՈՒ-ի կատարած դերի եւ կարեւորութիւնը գնահատողների մէջ իր ուրոյն տեղն ունի ճարտարարուեստի նորագոյն եւ ամենաարագ աճ ապրող տեղեկատուական տեխնոլոգիաների բնագաւառի հմուտ եւ ճանաչուած մասնագէտ Պրն. Գարեգին Չուքասգեանը: ՀՃՈՒ կազմակերպութեան երեք տասնամեակից աւելի հաւաքած տասնեակ հազարաւոր փաստաթղթերի անվնաս պահպանումն ու յաջող սերնդին փոխանցումը հնարաւոր է արդի ճարտարարուեստի ընձեռած նորագոյն միջոցների կիրարկմամբ միայն:

Առ ի գնահատանք այդ գործում ՀՃՈՒ-ին մատուցած Պրն. Գարեգին Չուքասգեանի մասնագիտական օժանդակութեան, ՀՃՈՒ-ի ԱՄՆ-ի բաժանմունքը որոշել է հրաւիրել եւ կազմակերպութեան տարեկան ճաշկերույթին իր յարգանքը մատուցել Պրն. Գ. Չուքասգեանին՝ նրա ներդրման եւ ազգային-հասարակական արգասաբեր գործունէութեան համար:

Գ. Չուքասգեանը ճանաչուած է որպէս մտաւորական, գիտական եւ կրթական մարզերի աշխատող, նաեւ գործարար, որն իր կարողութիւններն ի սպաս է դրել Հայաստանի տնտեսական եւ հասարակական կեանքի տարբեր բնագաւառներում:

Գ. Չուքասգեանի ջանքերով եւ անմիջական մասնակցութեամբ կեանքի են կոչուել առաջաւոր տեխնոլոգիաների նոր նախագծեր, ինչպէս նաեւ ներդրուել տնտեսական միջանկյալ ծրագրեր:

Գ. Չուքասգեանի յաջողութիւնների եւ ներդրումների շարքում արժէ նշել՝

իր անմիջական մասնակցութեամբ 1996 թուականին Երեւանում անցկացուած Շախմատի Համաշխարհային Օլիմպիադայի ին-

տերնետային հեռարձակման նախագիծը: Շախմատային օլիմպիադաների պատմութեան մէջ առաջին անգամ կիրարկուած այս նախագիծը CNN-ի կողմից համարուել է տարուայ աշխարհի 100 լաւագոյն կայքէջերից մէկը:

- 1997 թուականին գեղեցնելով ՀՀ նախարարների խորհրդին առընթեր Հաղորդագրութեան եւ Հրատարակչութեան Վարչութեան պետի պաշտօնը, ձեռնարկել եւ իրականացրել է արբանեակային հեռուստատարձակման Հայաստանեան համակարգը:

- 1999-2001 թթ. որպէս Համաշխարհային Բաց Հասարակութիւն Հաստատութեան տեղեկատուական եւ հաղորդակցական վարչութեան անդամ, (Բուրգայեշտ-Հունգարիա) պատասխանատու է եղել մօտ 30 երկրներում տեղեկատուական ցանցերին ինտեռնետի, էլեկտրոնային հրատարակութիւնների ռազմավարութեան մշակման եւ իրականացման համար:

- 2000-2002 թթ. նախաձեռնող է եղել Հայաստանում տեղեկատուական եւ հաղորդակցական ապարէզի միջազգային մի շարք համաժողովների կազմակերպմանը:

- Վերջին տարիներին Գ. Չուքասգեանի ակնառու յաջողութիւններից անհրաժեշտ է նշել աշխարհի 168 երկրների մօտ 20000 աշխատանքների միջոց Միացեալ Ազգերի կազմակերպութեան Համաշխարհային Գաղաթափողովի 2005 թ. Մշակութիւն եւ կրթութիւն բնագաւառի բարձրագոյն Մրցանակների արժանացած «Արամ ինտերնետ», կեանքն ու գործը» եւ «Օսմանեան Կայսրութիւնում Հայերի Յեղասպանութիւնը 1915-1923 թուականներին» եռալեզու խտացրած սալիկների (CD-ROM), ինչպէս նաեւ էլեկտրոնային բովանդակութեան «Մաշտոց 1600» համահայկական մրցանակի արժանացած «Պարոյր Սեւակ» եռալեզու խտացրած սալիկի (CD-ROM) պատրաստումը:

Պրն. Գարեգին Չուքասգեանի մեծարման երեկոն տեղի կ'ունենայ Ուրբաթ, Յունիս 9, 2006, երեկոյեան ժամը 7-ին, Brandview Collection սրահում (109 E. Harvard St., Glendale, CA):

Իսկ Կիրակի, Յունիս 11, 2006, երեկոյեան ժամը 6-ին Կլէնտէյլի կեդրոնական գրադարանում ծրագրուած է Պրն. Գ. Չուքասգեանի հանրային ելույթը նուիրուած Հայաստանում Տեղեկատուական Տեխնոլոգիաների առաջընթացի եւ ապագային: Վերջում, ցուցադրուելու է «Արամ ինտերնետ», կեանքն ու գործը» սալիկը (CD-ROM):

ԽՄԲԱՎԱՐ ՎԱՐԴՊԵՍ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ, ՏՆՕՐԵՆ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ ԵՒ ՓՈԽ ՏՆՕՐԵՆ ԴՈԿՏ. ԷԼԻ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՅԱԿ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Ընդառաջելով Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի բարեխօսութեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՍՈՒՐԲ ՍԱՅԱԿ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՇՔԱՆՇԱՆՈՎ կը պարգեւատրէ բազմալատակ խմբավար՝ Տիար Վարդգէս Գաբրիէլեանը, Հ.Բ.Ը Միութեան Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի Տնօրէն՝ Տիար Յակոբ Յակոբեանը եւ Փոխ Տնօրէն Դոկտ. էլի Անդրէասեանը:

Երկուշաբթի, Յունիս 12ին եւ Կիրակի, Յունիս 18ին Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ պարգեւատրման արարողութիւններ տեղի պիտի ունենան Վէն Նալսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ:

Որպէս դպրապետ եւ այլ պաշտօններով, Պրն. Գաբրիէլեան Պուրտոյ մէջ երկարամեայ նուիրեալ ծառայութիւն մատուցած է:

1979ի վերջերը կը հաստատուի Լոս Անճելըս եւ նորակազմ ինչպէս որ Դպրաց Դաս Երգչախումբի միաձայնութեամբ կ'ընտրուի դպրապետ: Գաբրիէլեանի ջանքերով Երգչախումբը կը հաստատուի Արեւելեան Լոս Անճելըսի մէջ գտնուող Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ մէջ, ուր Գաբրիէլեան 15 տարի իբր դպրապետ կ'ուսուցանէ ձայնագրութիւն եւ շարականագիտութիւն՝ ստանձնելով նաեւ տօնական օրերու երգեցողութեանց շարականներու ղեկավարութիւնը:

Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ Ծխական Անդամական Ժողովի կողմէ կ'ընտրուի պատգամաւոր եւ կը մասնակցի Թեմական Պատգամաւոր

րական Ժողովներուն: Տիար Յակոբ Յակոբեան անձնուէր կրթական մշակ եւ դաստիարակ մըն է, որ իր ամբողջ կեանքը նուիրած է հայ ժողովուրդի զաւակներու դաստիարակութեան: Արդարեւ, Պրն. Յակոբեան երկար տարիներ է ի վեր ամենայն ձեռնհասութեամբ եւ բարձր կարողութեամբ Տնօրէնի պատասխանատու պաշտօնը կը վարէ Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի:

Տիար Յակոբեան իր հայկական նախակրթութիւնը եւ երկրորդական ուսումը ստացած է Լիբանանի մէջ, իսկ բարձրագոյն կրթութիւնը Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն ներս՝ տիրանալով Պատկաւոր Արուեստից եւ Մագիստրոսի տիտղոսներուն՝ պատմութեան ճիւղին մէջ: 1970-1974 Լոս Անճելըսի մէջ ան յաճախած է Գալիֆորնիայի Լոս Անճելըսի Համալսարանը (UCLA), հետապնդելով Դոկտորական տիտղոսը Արդի Պատմութեան մէջ, միեւնոյն ատեն դասաւանդելով հայերէն լեզու՝ Նարեկացիի անուան Հայագիտական Ամպիոնէն ներս: Գալիֆորնիա հաստատուած օրէն՝ 1968էն սկսեալ, ան մաս կազմած է Լոս Անճելըսի հայկական վարժարաններու կեանքին, նախ որպէս ուսուցիչ եւ ապա տնօրէն: 1986էն ի վեր ան կը վարէ Հ. Բ. Ը. Միութեան Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի տնօրէնի պաշտօնը:

Հ. Բ. Ը. Միութեան Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի Փոխ Տնօրէնուհի՝ Դոկտ. էլի Անդրէասեանը

Շարք էջ 18

HARUT DER-TAVITIAN License #0828270 1807 W. Glenoaks Blvd., Suite 202 Glendale, CA 91201 Tel.: 818/502-3233 Fax: 818/502-3244 Pgr.: 818/608-9898 info@excellhye.com www.excellhye.com

Թեքեան Մշակութային Միութիւն (Լոս Անճելըսի Մասնաճիւղ) Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն (Մշակութային Յանձնախումբ) Նոր Սերունդ Մշակութային Միութիւն Միտով կը հրատարակուի ձեռագրուած գրքերը 2006 ԱՊՐԻԼԻՆ ԱՆԹԻԼԻԱՍ ԿԱՅԱՅԱԾ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ Գ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՅԻ Կը մասնակցին՝ ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ԼԻՍԻ ՍԻԻԼԱՀԵԱՆ ՏՕԶԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԹԵՐԵՉ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԽՈՐԷՆ ԱՐԱՄՈՒՆԻ Համադրող՝ ԼԻԼԻԹ ԲԷՀԷԵԱՆ Կիրակի, Յունիս 18, 2006. Երեկոյեան ժամը 7:00-ին Կլենտէյլի Կեդրոնական Գրադարան 222 E. Harvard Street, Glendale Հիւրասիրութիւն Մուտքը Ազատ

Massis Weekly

Volume 26, No. 20

Saturday, June 10, 2006

Armenia, Azerbaijan Announce No Progress In Karabakh Talks

BUCHAREST -- The foreign ministers of Azerbaijan and Armenia said Tuesday that talks between Robert Kocharian and Ilham Aliev had made no progress toward a settlement of the dispute over Nagorno-Karabakh, but that they had instructions to continue negotiations.

Օրուայ պատրիարքական տեղապահ Գէորգ Արք. Արսլանեան, 18 Հոկտեմբեր 1946 թուակիր նամակով Գէորգ Զ. (1945-1954) Ամենայն Հայոց Կաթողիկոսին կը տեղեկացնէր, թէ Թուրքիա գտնուող հայեր շատ կը փափաքին մայր հայրենիք գաղթել, բայց պէտք էր նախապատուութիւն տալ այն բազմահազար հայերուն, որոնք Անատոլի գանազան գաւառներուն եւ եւ առաւելապէս գիւղերուն մէջ ցիր ու ցան, դառն վիճակի մէջ կը գտնուէին:

Դիմողները Հայաստան տանելու համար սովետները նաւ չղրկեցին, ինչպէս ղրկած էին տարբեր երկիրներէն դիմողները Հայաստան փոխադրելու համար:

Ամերիկացիներու ստիպումներով, որպէս ժողովրդավարութեան ապացոյց, 18 Յուլիս 1945ին հիմնուած, Թուրքիոյ երկրորդ քաղաքական կուսակցութիւնը՝ Տեմոքրատ Կուսակցութիւնը (Տեմոքրատ Փարթի - DP) Ատնան Մենտերէսի վարչապետութեամբ, 1950ին, գործի գլուխ եկաւ: Քաղաքական օղբ այնքան ալ հեղձուցիչ չէր: Այդ օրերուն քաղաքական ծաղրանակներու սկսան թերթերու էջերը

Շարք էջ 17

ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

ԴՈԿՏ. ԱԼՖՐԷԴ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

ԱՆԳԼԵՐԵՆ-ԲԱՅԵՐԵՆ
ԲԺՇԿԱԿԱՆ
ԲԱՅԱՏՐԱԿԱՆ
ԱՈՋԵՌՆ ԲԱՌԱՐԱՆԸ

ENGLISH-ARMENIAN
COMPREHENSIVE
MEDICAL
DICTIONARY

Շուրջ 500 էջեր եւ 8,500 բժշկական, գիտական, առողջադատական բառեր եւ բացատրութիւններ
դարձակող այս գործածական եւ խիստ օգտակար
բառարանը, ամէն հայ ընթացիկ դարձի ունենալ:

Գին՝ \$20.00

Կը վաճառուի գրասրահներ Պերճ (818) 244-3830,
Ադրիլ (818) 243-4112,
Սարդարադաս (818) 500-0790 եւ
«Երեւան» տպարան (818) 246-2070

Կարելի է դիմել նաեւ հեղինակին, հեռախօսելով՝
(818) 543-7584

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ ԸԱՅԱՍՏԱՆ ԸԱՄԱԸԱՅԿԱԿԱՆ ԸԻՄՆԱԴՐԱՄԻ «ԸԱՅԱՍՏԱՆ» ԸԻՄՆԱԴՐԱՄԻ ԸՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՐԴԸ ԳՈՒՄԱՐԵՅ 15-ՐԴ ՆԻՍՏԸ ԸՆԳԾՈՒԵԼ Է ԸԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՎԵՐԵԼՔԸ

2006 թվականի Մայիսի 5-ին Երեւանում տեղի ունեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստը: Աշխարհի տարբեր անկիւններում գտնուող հիմնադրամի մարմինների ղեկավարները հաւաքուել էին գնահատելու կազմակերպութեան գործընթացը, քննարկելու ֆինանսական հաշուետուութիւնը, ինչպէս նաեւ առաջիկայի հաշուետուութիւնը: Նիստի ընթացքում քննարկուեցին նաեւ հիմնադրամի անելիքներն ու գործունէութեան գերակա ուղղութիւնները: Հոգաբարձուների խորհրդում ընդգրկուած են սփիւռքի բոլոր մեծ կազմակերպութիւնները, որոնց միասնական առաքելութիւնը մէկն է՝ շինացնել հայրենիքը: Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան շրջանի ներկայացուցիչներն էին Հոգաբարձուների խորհրդի նախագահ Մարիա Մեհրանեանն ու Գործադիր Տնօրէն Սարգիս Քոթանճեանը:

Աշխատանքները սկսելուց առաջ ներկայացրեցին Արմաւիրի 967 չուերթի վթարի գոհերի յիշատակը: Այնուհետեւ, Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. գոհերի հոգեհանգստեան աղօթքը մատուցեց: Խորհուրդն անդրադարձաւ հսկայական նշանակութիւն ունեցող Արցախում «Հիւսիս-Հարաւ» մայրուղու շինարարութեան ընթացքին: Լայնածաւալ ենթակառուցուածքային այս ծրագիրը կ'աւարտուի 2007 թվականին: 2004 թվականի հեռուստամարաթոնը բաւարար գումար ապահովեց ծրագիրն աւարտին հասցնելու համար: Մարաթոնի արդիւնքը ռեկորդային էր՝ \$11.5 մլն տոլար:

Գրանթ թորնթոն Ամիօ Ֆրանս-ամերիկեան առաջիտորական ընկերութիւնը ներկայացրեց 2005 ֆինանսական տարուայ ֆինանսական եւ շինարարական առաջիտոր՝ ստուգելով շինարարական ընթացակարգերն ու մեթոտները: «Մեր կարծիքով համախմբուած ֆինանսական հաշուետուութիւնները տալիս են հիմնադրամի 2005 թ. Դեկտեմբերի 31-ի դրութեամբ ֆինանսական վիճակի եւ նոյն ամսաթուին աւարտուած տարուայ գործունէութեան արդիւնքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ ֆինանսական հաշուետուութիւնների ներկայացման միջազգային չափանիշներին համապատասխան», նշեց ընկերութեան տնօրէն-բաժնետէր Արման Փինարբասին: Համաձայն Գրանթ թորնթոնի խորհրդի՝ հիմնադրամը շարունակում է պահպանել իր ներքին առաջիտոր հսկողութեան մեխանիզմները, որոնց մէջ են մտնում եռամսեայ միջանկեալ ֆինանսական հաշուետուութիւնները:

Նիստի ընթացքում հիմնադրամի Գործադիր տնօրէն Նայիրա Մելքունեանը ներկայացրեց կազմակերպութեան համապարփակ հաշուետուութիւնը: Նա երկու հիմնական կէտեր ընգծեց. առաջինը՝ սփիւռքում շարքային նուիրատուների քանակի աճը, յատկապէս ԱՄՆ-ից, եւ երկրորդը՝ Հայաստանում եւ Արցախում իրականացուած ծրագրերի թուի աճը: Միջազգային մակարդակով հիմնադրամը 20%-ի եկամտի աճ է գրանցել:

Հիմնադրամը շարունակում է

ծրագրեր իրականացնել Հայաստանի տարբեր մարզերում եւ ի հարկէ, Լեռնային Ղարաբաղում: Տիկին Մելքունեանը ներկայացրեց նաեւ Մարտակերտի տարածաշրջանային զարգացման ծրագիր ընթացքը: Ներկայումս աւարտին է մօտենում տարածաշրջանային հիւանդանոցի նախագծման փուլը: Աշխատանքները ղեկավարում է հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան շրջանի մարմինը: Յունիսի վերջին կը սկսի ջրամատակարարման համակարգի կառուցումը: Իրականացման փուլին է մօտենում նաեւ գիւղատնտեսական զարգացման ծրագիրը: Վերջին տասնամեակում Հիմնադրամը աւելի քան 140 մլն. տոլարի ենթակառուցուածքային զարգացման ծրագրեր է իրագործել:

«Իւրաքանչիւր կազմակերպութեան համար, լինի այն կորպորատիւ թէ ոչ-շահութաբեր, 40% աճը իսկապէս նշանակալից արդիւնք է: ԱՄՆ-ում գործող Արեւմտեան շրջանի մարմինը՝ Armenia Fund, Inc.-ը հիմնական դեր ունի այս յաջողութեան մէջ, յատկապէս նուիրատուների թուի հարցում: Կազմակերպութեան թափանցիկ աշխատանքն ու յաջողութիւնները ինչպէս նաեւ արձանագրած նուաճումները ապացոյցն են նրա կենսունակութեան եւ առաջընթացի», նշեց ԱՄՆ Արեւմտեան շրջանի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Մարիա Մեհրանեանը: «Կը ցանկանայի նաեւ աւելացնել, որ շարունակելու ենք հասարակայնութեան հետ մեր ակտիւ աշխատանքը, ինչի արդիւնքը ակնյայտ կը դառնայ արդէն հեռուստամարաթոնին նախորդող ամիսներին», ասաց Մարիա Մեհրանեանը: «Հայաստան» Հիմնադրամի համաշխարհային հեռուստամարաթոնը, իսկապէս դրամահաւաքի խոշոր իրադարձութիւն է Հիմնադրամի համար: Խորհրդի որոշմամբ Հիմնադրամը լայնածաւալ քարոզչական գործունէութիւն կը ծաւալի ոչ միայն Ամերիկայի Միացեալ Նահանգներում, այլեւ ամբողջ աշխարհում՝ ջանքերն ուղղելով յատկապէս դէպի Եւրոպա եւ Միջին Արեւելք:

Նիստի ընթացքում քննարկուեցին նաեւ շինարարութեանը վերաբերող հարցեր: Ընդգծուեցին այս կարեւոր քայլերն ու մեխանիզմները, որոնք կը հաւաստիացնեն «Հայաստան» հիմնադրամի շինարարութեան բարձր որակը: Որոշում ընդունուեց միջոցներ ձեռնարկել այդ ուղղութեամբ եւ մեթոտներ մշակել՝ բարձրացնելու նաեւ հսկողութեան որակը: Առաջին քայլն արդէն արուած է, լայնածաւալ մոնիթորինգ է իրականացուել 2006 թվականի առաջին ամիսների ընթացքում:

«Շինարարութիւնը բարդ գործընթաց է: Այն յատուկ սկզբունքներ եւ խիստ ընթացակարգ է պահանջում: Արդիւնաւետ ծրագրի տնօրինումը, շինարարութեան կառավարումն ու որակի հսկողութիւնը ամբողջ աշխարհում շինարարական գործընթացի անբաժան մաս են կազմում: Սակայն պէտք է յիշենք, որ արեւմտեան չափանիշներն ու շինարարական քողերը դեռեւս լիարժէքորէն չեն կիրառուում Հայաստանում եւ մենք պէտք է հնարաւորինս ջանքեր գործադրենք՝ հասնելու դրան:



Գործադիր տնօրէն Նայիրա Մելքունեանը ներկայացնում է 2005 թ. տարեկան հաշուետուութիւնը: Ձախից աջ՝ Արթնթիւնայի ներկայացուցիչ Ճորն Վարդպարտնեան, ՀՀ նախագահի օգնական Վիգէն Սարգսեան եւ Հիմնադրամի գործադիր տնօրէնի տեղակալ Արա Վարդանեանը



Ձախից աջ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչ Վաղարշ Երաւմեան, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ Վարդան Եղազեան եւ Ռաւմկապար Ազատական կուսակցութեան ներկայացուցիչ Մայիս Խարապեանը



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Լիբանանի, Հունգարիայի եւ Մեծ Բրիտանիայի տեղական մարմինները

Հիմնադրամն այդ ուղղութեամբ հսկայական աշխատանք է տարել, ուստի՝ քննադատելու փոխարէն՝ հարկաւոր է աջակից լինել նրան», ասաց Մարիա Մեհրանեանը: «Դա ինձ ծանօթ է ԱՄՆ-ում ձեռք բերած քաղաքաշինութեան եւ ենթակառուցուածքային զարգացման իմ անձնական փորձից»: Աւելացրեց Տիկին Մեհրանեանը:

Հոգաբարձուների խորհուրդն ընդունեց նաեւ ամերիկահայ փաստաբան Մարկ Կիրակոսին իր կազ-

մում: Մարկ Կիրակոսը ներկայ էր նիստին: «Ինձ տպաւորել է Հիմնադրամի խորհուրդը, մասնաճիւղերի աշխատանքն ու կառուցիչ ընդհանուր յաջողութիւնները: Սա առաջնակարգ կառուց է եւ այն կը շարունակի կենսական նշանակութեան ծրագրեր իրականացնել Հայաստանում եւ Արցախում: Հպարտ եմ, որ ընդգրկուել եմ այս կազմակերպութեան հոգաբարձուների

ՄԱՐԿ ԿԻՐԱԿՈՍԸ «ՇԱՅԱՍՏԱՆ» ԸՆԴՈՒՄԻ ԵՎ ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԻ ԵՎ ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԻ ԵՎ ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԻ



Մարգիս Քոթանջեանը, Մարկ Կիրակոսն ու Մարիա Մեհրանեանը հոգաբարձուների խորհրդի նիստում

Նշանաւոր փաստաբան եւ CNN-ի իրաւական հարցերով վերլուծաբան Մարկ Կիրակոսը ընդգրկուել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում, որն այս համաշխարհային կառուցի կառավարման գերագոյն մարմինն է: Հոգաբարձուների խորհուրդը միաձայն հաստատեց Մարկ Կիրակոսի թեկնածութիւնը: Հայաստանում եւ Արցախում կարեւորագոյն հայանպաստ ծրագրեր իրականացնող առաջնակարգ կազմակերպութեան մասին խօսելով՝ Մարկ Կիրակոսը նշեց. «Այն, ինչը ես յատկապէս գնահատում եմ, «Հայաստան» հիմնադրամի համահայկական եւ համաշխարհային բնույթն է, այն միաւորում է հայկական քաղաքական, մշակութային եւ կրօնական հաստատութիւնները մէկ ընդհանուր առաքելութեան շուրջ, այն է՝ շէնացնել Հայաստանն ու Արցախը»:

Նակցել է ամերիկահայ համայնքի գործունէութեանը: Վերջերս մի քանի այլ լուս անձեւըսեան փաստաբանների հետ միասին նա դատական հայցով է հանդէս եկել՝ ընդդէմ գերմանական պանքերի Դոյչէ պանքի եւ Դրեզդներ պանքի, որոնք հրաժարուել էին վճարել հայկական



Մարկ Կիրակոսը հեռախոսով հարցազրույց է տալիս տեղական մամուլին

կան ցեղասպանութիւնից փրկուածներին:

Կիրակոսի յաճախորդներից են հոլիվուդեան կինոդերասանուհի Վինոնա Ռայդերը եւ փոփ աստղ Մայքլ Ժէքսընը:

Լուս Անճելոսի Լոյոլա Մերիմաունթ համալսարանի սանը վերջերս ճանաչուել է երկրի ամենաազդեցիկ փաստաբաններից մէկը: Լուս Անճելոս թաղամասը նրա մասին արտայայտուել է որպէս «անպարտելի»:

Որպէս Հիմնադրամի հոգաբարձու, Կիրակոսը նպաստելու է սփիւռքի ֆինանսական միջոցների հաւաքագրման եւ դրանք Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ենթակառուցում քննելի զարգացմանն ուղղու գործընթացին:

«ՇԱՅԱՍՏԱՆ» ԸՆԴՈՒՄԻ ԵՎ ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԻ ԵՎ ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԻ ԵՎ ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԻ

«Հայաստան» Համահայկական հիմնադրամն իր տեղական մարմինների հետ միասին 25,000 տոլար է փոխանցել Մայիսի 2ին Սեւ Մովսիս վթարի ենթարկուած «Արմախ» ընկերութեան ինքնաթիռի գոհերի ընտանիքներին օգնութիւն տրամադրելու նպատակով բացուած հաշոհամարին: Գումարի չափը հաստատուել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի ընթացքում, որը կայացել է 2006 թ. Մայիսի 5ին, Երեւանում: Հայաստանի կառավարութիւնը 967 չուերթի գոհերի ընտանիքներին աջակցութիւն ցուցաբերելու համար միջազգային հաշուի է բացել: Այս վթարը Հայաստանի աւիացիայի պատմութեան մէջ ամենամեծ աղէտն է, եւ ՀՀ նախագահի հրամանագրով Մայիսի 5-ն ու 6-ը երկրում սգոյ օրեր են

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ ԸՆԴՈՒՄԻ ԵՎ ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԻ ԵՎ ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԻ

Մարտի 14-էն



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Կանադայի, Ֆրանսիայի եւ Արգենտինայի տեղական մարմինները



ԼՂՀ նախագահ Ղուկասեանն ու Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի փոխնախագահ Միշել Փազու մեանը քննարկում են Լեռնային Ղարաբաղի զարգացման ծրագրերը, ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելեանն ու ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահ Տիգրան Մարգարեանը զրուցում են ընդմիջման ժամանակ



Հոգաբարձու Վարդան Եղիշեանն ու Մարիա Մեհրանեանը քննարկում են Մարտակերտի շրջանային հիւանդանոցի ծրագիրը

խորհրդում», ասաց Մարկ Կիրակոսը նիստին յաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ: Հոգաբարձուների խորհրդում Կիրակոսը փոխարինեց Միհրան Աղբաբեանին, ով մեծ աւանդ է ունեցել հիմնադրամի աշխատանքներում: Հոգաբարձուների խորհրդի նիստից առաջ հիմնադրամի գործադիր վարչութեան եւ մասնաճիւղերի ներկայացուցիչները ժողով հրաւիրեցին Հայաստանի Ամերիկեան համալսարանի բիզնես կենտրոնում, որի ընթացքում

քննարկուեցին մասնաճիւղերի հետ համագործակցութիւնն ընդլայնելու վերաբերեալ հարցեր: «Ժողովն իսկապէս արդիւնաւէտ էր, լսուեցին կարծիքներ ու տեսակէտներ աշխարհի տարբեր եկրների ներկայացուցիչների կողմից: Հետագրքիր էր ծանօթանալ ԱՄՆ-ից դուրս ապրող մեր հայրենակիցներին մտահոգող խնդիրներին», ասաց «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Արեւմտեան շրջանի Գործադիր Տնօրէն Մարգիս Քոթանջեանը:

ՎԱՅՈՑ ՊԱՐԸ ԳՐԱԻՅՑ «ԿՈՂԱԿԸ»

Վարդան Եւ Սիրանուշ Գեորգեանների Միջազգային Պարերի Ստուդիայի 10րդ Տարեդարձի Առթիւ

ՎԱՂԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Յայտնի է, որ հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը, մօր կաթի հետ հայի արեան մէջ է, նրա հուրիւնն է:

Հայը երջանիկ է, երբ «յան» կամ «եան» վերջաւորութեամբ մէկը սիրանք է կատարում, կամ գիտական մեծ գիւտի հեղինակ է, սպորտում՝ համաշխարհային ռեկորդ է սահմանել, կամ էլ շահմատում յաղթող է: Նաեւ խորը ցաւ ենք զգում, երբ դատապարտելի, բացասական արարքներ է վերագրում հային:

Չարմանալի հայ:

Իմ կարծիքով, ի գուր են ոմանց ջանքերը, տարբեր անօգուտ միջոցներով հայերին ազգասիրութիւն քարոզելը:

Մարտի 12ին, «Վարդան Եւ Սիրանուշ Գեորգեանների միջազգային պարերի ստուդիայի» 10րդ տարեդարձի յոբելինական շունդալից համերգով գրաւեցին աշխարհահռչակ «Կողակ» թատերասրահը, մեծ յուզմունք ու հպարտութիւն պարզեցնելով հայերիս, մասնաւորապէս ներկաներին:

Նախ՝ «Կողակում», հիմնականում ելույթներ են ունենում համաշխարհային աստղերը, եւ հազուադիւր համոյթներ - այն շատ թանկ հաճոյք է: Վարդանն ու Սիրանուշը մեծ խիզախութիւն են ցուցաբերել, այս յոբելինականը ներկայացնելով «Կողակ»ում:

Միւս կողմից էլ, սա միանգամայն օրինաչափ է, քանզի նրանք, ստուդիայի զարգացմանն ու ընդարձակմանը համապատասխան հա-

մերգներով հանդէս են եկել, համեմատաբար, փոքր բեմերում՝ «Հայ Սքուլ»ի, «Ալէքս»ի բեմերում, այնուհետեւ, փնտրում էին աւելի մեծ - բազմահարթակ բեմեր, որտեղ հնարաւոր լինէր բեմադրել այնպիսի մասսայական պարեր, որ հնարաւոր լինէր բեմ հանել միանգամից Մօտ 500 հրաշք մանուկների:

Հերթական մեծ համերգը տեղի ունեցաւ 2000 թ. Սեպտեմբերի 24ին «Ճոն Անտոն Ֆորտ» ամփիթատրոնի եռահարթակ բացօթեայ բեմում, որտեղ բնութեան ու մանուկների - երկնականմարի բոլոր գոյներով ու ճաշակով կարուած փայլուն հագուստների ներդաշնակութեամբ աննկարագրելի պատկերը - անջնջելի հաճոյք էր ներկաներին: Նոյն բեմում համերգները կրկնուեցին մի քանի անգամ:

Եւ ահա մի նոր թուիչք - դէպի «Կողակ» համերգի ընթացքում կատարուեցին ինչպէս նոր, այնպէս էլ համերգացանկի լաւագոյն կրկնուող բեմադրութիւններ:

Շատ տպաւորիչ էր 1915 թուի հայոց ցեղասպանութեանը նուիրուած մեծ, թատերականացուած «Կտակը», որը իր զգայացուցիչ, յուզիչ պատկերներով ու գեղարուեստական բարձրորակ ձեւաւորումներով անջնջելի տպաւորութիւն թողեց հանդիսատեսների վրայ: Մեծ ոգեւորութեամբ ընդունուեց նաեւ ՀՀ վաստակաւոր արտիստ Նորայր Մեհրապեանի բեմադրութեամբ «Գիւմրուա Շորոր» պարը Սիրանուշի եւ իր դուստրերի Նինել եւ Սոնա Գեորգեանների հիանալի կատարմամբ: Աւելի քան 3 ժամ տեւած համերգի ընթացքում կա-

տարուեցին մօտ 30 պարեր, որոնց գեղարուեստական մեծ արժէքների վկայութիւնը՝ հանդիսատեսների փոթորկալից ծափողջոյններն ու բացականչութիւնները:

Համերգի անակնկալներից էր հանրաճանաչ կոմպոզիտոր Կոնստանդին Օրբելեանի «Իմ Սուրբ Հայրենիք» երգը՝ Ռազմիկ Մանսուրեանի կատարմամբ հեղինակի նուագակցութեամբ:

Իր անկրկնելի ասմունքով համերգում ելույթ ունեցաւ նաեւ Նունէ Աւետիսեանը, որի մասնակցութիւնը, մի առանձնապատուկ բովանդակութիւն ու շուք տուեց երեկոյին, նրա իւրաքանչիւր կատարում ուղեցուած էր երկարատեւ ծափահարութիւններով: Անթերի էր բեմի բարդ տեխնիկայի յստակ աշխատանքը իր ձայնային, լուսային եւ գոյնային էֆեկտներով ի շնորհիւ իրենց գործի լաւագոյն գիտակներ՝ Անդրանիկ Մալադեանի, Արտիոմ Հագանճեանի, Ջիլբերտ Բաղրամեանի, Ստեփան Բարթամեանի:

Հաճելի տպաւորութիւն թողեց սիրուած դուդուկահար Ռուբէն Յարութիւնեանի ելույթը: Գովասանքի արժանի է բեմական հագուստների վարպետ Ալլա Մուշկամբարեանի բարձրաճաշակ աշխատանքը:

Երեկոն յաջողութեամբ վարեց (անգլերէն լեզուով) Արշալոյս Դար-

բինեանը:

Համերգն աւարտուած է: Բեմ են բարձրանում Քալիֆորնիայի պարուեստի միութեան գեղարուեստական խորհրդի անդամներ Սամուէլ Նազարեանը (Վանուշ Խանամիրեանի անուան դպրոց) եւ Վարդան Արաճանեանը (Զուարթնոց Պարախումբ) որոնք Վարդանին եւ Սիրանուշին ջերմօրէն ողջունում են համոյթի յոբելինական 10րդ տարեդարձի, ինչպէս նաեւ չքնաղ երեկոյի կապակցութեամբ:

Վերջում, ներկաների ծափահարութիւններէ ուղեկցութեամբ բեմ է բարձրանում Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանը, որի ողջոյնի շնորհաւորական բովանդակալից ելույթը ներկաները լսեցին մեծ ուշադրութեամբ: Սրբազանի ջերմ խօսքերը հնչեցին որպէս աղօթք բոլոր մասնակիցներին, Վարդան եւ Սիրանուշ տաղանդաւոր գոյգին մանուկ սերունդի գեղազին տական դաստիարակութեան դժուարին եւ հայանպաստ գործի համար:

Ագնահատելի էր Պետրոս եւ Կարինէ Տաղեանների հովանաւորութիւնը:

Վարձքը կատար Վարդան եւ Սիրանուշ Գեորգեաններին: Հանրութիւնը սպասում է նոր բարձրունքներ:

ՔԱՋ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵՌԵՐ ԾՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան
 Ժամը 11:00-ից 1:00
 Կլէնտոյլի 26-րդ կայանից



WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
 "Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL
CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT
EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW



NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD

CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

910 E. MAIN ALHAMBRA, CA



BELLY DANCING

PHOTO/CONCEPT-J/D-2005 TEL (626) 795-4493

ԹՈՒՐԲԵՐՈՒՆ՝ ԹՈՒՐԲԻԱՆ ԹՐԲԱՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 6-ԷՋ

գարդարել: Խրոհողարանի անդամ ընտրվեցան հայ մը, հրեայ մը եւ երկու յոյներ: Որոշ ու նշմարելի ազատութիւն մը կար: Նախորդ շրջանի, Հանրապետական ժողովրդական կուսակցութեան (CHP) միահեծան, ազգայնամուլ եւ բռնատիրական շրջանը կարծես վերջ գտած էր: Թերթերու մէջ մասնատական ժողովուրդը փոքրամասնութիւններու դէմ քրքրող հրատարակութիւնները դադարեցան: Ըստ ՏՓ կուսակցութեան ներքին կանոնադրութեան բոլոր քաղաքացիները, առանց կրօնքի ու ցեղի խտրութեան, թուրք կը նկատուէին: Սակայն քաղաքացիութեան սահմանումը հասարակաց պատմութիւն է եւ նման տեսլական ունենալ էր, ինչ որ Հալք կուսակցութեանն տարբերութիւն չունէր: Թէեւ փոքրամասնութիւններուն պետական պաշտօնեայ կամ համալսարանի դասարիստ ըլլալը արգիլող գրաւոր օրէնք մը չկար, սակայն, ինչպէս Հալք կուսակցութեան, նոյնպէս ալ Տեմոքրատներու շրջանին անոնց աչք տեղերը գործիչ չէր տրուեր: Կուսակցութեան գլխաւոր հիմնադիրները՝ Ատնան Մենտերէս, Ֆուաթ Քիօփրիւլիւ, Ռեֆիք Քորալթան... Հալք կուսակցութեան անդամներն էին եւ Ունեւորութեան Տուրքին ի նպաստ քուէարկած: Հիմնադիրներէն ձեւալ Պայար աչք օրէնքի քուէարկութեան օրը ժողովէն բացակայած էր, ինչպէս նաեւ 75 ուրիշ երեսփոխաններ:

1952ին ծագեցաւ Կիպտրի հարցը: Կիպրոս անգլիական գաղթավայր մըն էր: Կիպրացիները կղզին Յունաստանին կցելու (Enosis) մտադրութեամբ գինեալ ընդդիմութեան դիմեցին: Անգլիա, իր հանձարեղ դիւանագիտութեամբ, հարցը թուրքի-յոյնի հարցի վերածեց եւ 1954ին, թուրք կառավարութիւնը Յունաստանի հետ բանակցելու համար Լոնտոն հրաւիրեց:

Երկրին մէջ ծագած անտեսական դժուարութիւնները, ընդդիմադիր կուսակցութեան եւ մամուլի սուր քննադատութիւնները Մենտերէսի կառավարութիւնը դժնդակ կացութեան մատնած էին: Հարկաւոր էր ժողովուրդին եւ մամուլին ուշադրութիւնը ուրիշ հարցի մը վրայ կեդրոնացնել՝ գանոնք տարբեր հրատապ հարցով մը զբաղեցնել:

Կիպրոսի հարցը Մենտերէսի փրկութեան հասաւ: Կ. Պոլսոյ յոյները եւ հայերը թուրքիոյ համար կասկածելի տարրեր էին: Անոնք երկրին թշնամիները կը նկատուէին: Առեւտրական հրապարակը տակաւին որոշ չափով այս փոքրամասնութիւններուն ձեռքն էր: Զուլման քաղաքականութիւնը ակնկալուած արդիւնքը չէր տուած:

Կիպրոսի հարցը մենտերէսեան թուրքիոյ տուաւ երկիրը թրքացնելու քաղաքականութեան կիրարկման աչք առիթը, ինչ որ Եկրոյդ Աշխարհամարտը տուած էր Իսթէթ Ինէժուիւի գլխաւորած հանրապետական իթթիհատականներուն:

Եկաւ, հասաւ 1955ի Սեպտեմբերի 6ը:

Պետական ռատիոկայանը կէսօրէն ետք ժամը 1:00ին տեղեկացուց, թէ Աթաթիւրքին Սելանիկի մէջ ծնած տան պարտէզը յոյները ուսմբ պայթեցուցած էին: Վարչապետին բարեկամ անձի մը հրատարակած «Իսթանպուլ էքսպրէս» լրագիրն ալ, յետմիջօրէին, 250 կամ 290 հազար տպաքանակով նոյն լուրը հրատարակեց: Այդ օրերուն աչքեքան մեծ տպաքանակ, աչքեքան կարճ ժամանակի մէջ տպել տակաւին կարելի չէր: (35) Համապատասխան տպաքանակի համար թուրքի հայթայթել ալ բաւական խրթին հարց մըն էր: Կառավարութեան թելադրութեամբ 1954ին կազմուած եւ պետութեան նիւթական աջակցութիւնը վայելող երիտասարդական միութեան մը՝ «Կիպրոսը Թուրք Ընկերութիւն»ին (Գպրոս Թիւրքթիւր Ընկերութիւն - KTC) անդամները այս թերթը քաղաքի բոլոր շրջաններուն մէջ ժողովուրդին բաժնեցին: Այս կազմակերպութիւնը իր հիմնարկութեան շրջանին, պետութեանն ստացած է նախ 20 հազար լիւրա, յետոյ ալ՝ 200 հազար: (36)

Յետագային բացայայտեցաւ, թէ Անգլիոյ Աթէնքի դեսպանը տարի մը առաջ, Օգոստոսին, Լոնտոն դրկած իր մէկ տեղեկագրին մէջ թելադրած էր ուսմբ պայթեցնել: (37)

«Պիտի չզղջանք» թելադրութիւններով Անտալուէն կանխաբերուած, (38) իրենց զանազան փոխադրական միջոցներ տրամադրուած եւ բահերով, բրիչներով, կացիներով, փայտերով գինուած խուժանը, 20-ական, 30-ական խումբերու բաժնուած, յոյներու եւ հայերու տուններուն, խանութներուն, գործատեղիներուն, դպրոցներուն, եկեղեցիներուն հասցեագրուած ցանկերուն տէր առաջնորդելով սկսաւ իր կործանարար առաքելութեան: Խանութներու երկաթեայ փեղկերը կտորեցին, ցուցափեղկերուն ապակիները փշրեցին եւ ապրանքները փողոց թափեցին, կոխկոտեցին, կտորեցին: Տուններու, նոյնիսկ շէնքերու չորրորդ, հինգերորդ յարկի բնակարարներուն մուտքի դռները կտորեցին: Ներս խուժեցին: «Այսօր ձեր ինքքը, վաղը ձեր կեանքը» (39) բացականչութիւններով տնեցիները ահ ու սարսափի մատնեցին: Փողոցները կտորուած սառնարաններով եւ դաշնակներով, ապակիի, հայելիի եւ պնակեղէնի փշրութիւններով, տնային գանազան առարկաներով, կտրուած, պատուած հագուստի եւ կերպասի կտորներով, ծաղարաններու եւ նպարավաճառներու ուտեստեղէններով

լեցուեցաւ: Այն ինչ որ չկրցին կտորել, փոխադրական միջոցներու ետին կապած փողոց-փողոց քաշկոտեցին: Թալանեցին, աւարտարին: Ինչ որ կրնային հետերին տանիլ՝ հագուստ, կօշիկ, զարդեղէն, առին-տարին: Փողոցներէն անցիլ՝ քալելով կամ երթեկի միջոցներով, գրեթէ անկարելի եղաւ: Եկեղեցիները պղծեցին: Եկեղեցապատկան գոյքերը կտորեցին: Կարգ մը եկեղեցիներ հրկիզեցին: Վանքերը թալանեցին: Գերեզմանատուններու մէջ գերեզմանաքարերը կտորեցին: Դագաղները բացին, ոսկորները կտորեցին, աչքեցին: Նոր թաղուած դիակները դաշունահարեցին:

Ոստիկանութիւնը չմիջամտեց, մնաց դիտող: Խուժանին օգնող, անոնք խրախուսող ոստիկաններ ալ եղան: (40) 1960ի յեղափոխութեանն ետք կաշացած «Շասսը Ատա»ի դատաւարութիւններուն ընթացքին ի յայտ եկաւ, թէ ոստիկաններուն հրահանգուած էր միայն հրդեհի պարագային միջամտել: (41)

Գիշերը ուշ ատեն, երբ քաղաքը անճանաչելի երեւոյթ մը ստացած էր, բանակը քաղաք իջաւ: Գիշերը փողոց ելլելը արգիլուեցաւ: Պարէտական կարգեր հաստատուեցան: Բանակի հրամանատարութիւնը գինուորական ատեաններ հաստատեց ու թերթերը ենթարկեց խիստ գրաքննութեան: Արգիլուեցաւ 6 Սեպտեմբերի դէպքերուն մասին յօդուած եւ նկար հրատարակել: Օտար թղթակիցներ, որոնք IMF-ի ժողովներուն հետեւելու եկած էին, գրաքննութեան չենթարկուելու եւ դէպքերու նկարները իրենց թերթերուն հասցնելու համար անմիջապէս երկրէն դուրս ելան:

(Շարունակելի 3)

- 25. «Վարլըֆ Վերկիսի», էջ 49, 87
- 26. «6-7 Սեպտեմբերի Դէպքերը», էջ 111
- 27. «Վարլըֆ Վերկիսի» էջ 9
- 28. Նոյն, էջ 61
- 29. «6-7 Սեպտեմբեր Դէպքերը», էջ 117
- 30. «Հաբըրլընթրու...», էջ 45
- 31. «Վարլըֆ Վերկիսի», էջ 72
- 32. Նոյն, էջ 73
- 33. «6-7 Սեպտեմբերի Դէպքերը», էջ 116
- 34. «Վարլըֆ Վերկիսի», էջ 76
- 35. «Հաբըրլընթրու...», էջ 103, 104
- 36. «6-7 Էլիւ Օլայարը - Ֆոթոկրաֆար - Պելկեր - Ֆահրի Զոֆեր Արշիթի Թարիի Վաֆըր «Նուրտ Եայընլարը» (6-7 Սեպտեմբերի Դէպքերը - Լուսանկարներ - Վաւերաթուղթեր - Ֆահրի Զոֆերի Արիթիւր), 2005
- 37. «Թիփուլմալ Թարիի», Էլիւ 2005 (Հաւաքական Պատմութիւն, Սեպտեմբեր 2005)
- 38. «Իսթանպուլուա, Տիյարպարտա Ագալըրֆէն» (Երբ Իսթանպուլի, Տիյարպարտի Մէջ Կը Նուագիմ), Ելիւա, Պելկէտ Եարընըրըֆ, 1996
- 39. «6-7 Սեպտեմբերի Դէպքերը», էջ 19
- 40. Նոյն, էջ 20, 21
- 41. Նոյն, էջ 22

Jacob Demirdjian
Art Photography
 YOUR ONE STOP INTERNATIONAL ART DEALER @
POWER OF THE CAMERA ~ Running WOLF
 1960 East Corson Street Suite #101
 Pasadena, CA. 91107-3206 .
 ©2006
 PHOTOGRAPHY AND THE LAW
 ADVERTISING DESIGN SERVICES
 IS PROTECTED UNDER
 THE UNITED STATES COPYRIGHT
 LAWS
 WITHOUT THE EXPRESS
 WRITTEN CONSENT OF THE AUTHOR
 ANY REPRODUCTION OR PUBLICATION OF
 ANY SORT OR MEANS BY ANYONE
 OR ANY ENTITY IS NOT PERMISSIBLE
 BY
 LAW TO OBTAIN SUCH
 PERMISSION PLEASE CONTACT
 PHOTOGRAPHY.BY.JACOB.DEMIRDJIAN.©2006
 COPYRIGHT.2006 FOR PUBLICITY.USAGE ONLY.©
 PHOTO.CREDIT.JACOB.DEMIRDJIAN
 No part of this order will be delivered until
 the balance is paid in full:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

ՏԵՍԱԿԱՆՈՎ ԱՆԸԱՏԸ

ԴՌԿՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

Այն օրը, երբ մեր նախնիները կերտեցին Տիր աստուծոյ գաղափարը հայ մարդու գիտակցութեան մէջ արմատաւորեցին գրի ու գրականութեան պաշտամունքը, այն գաղափարը, որ գիրն ու դպրութիւնը ունեն մարդուն բարձրացնելու, վեհացնելու մի ներքին ոյժ, այն համոզմունքը, որ դպրութեան քրմութիւնը, գրի երախտաւորութիւնը մարդկային բնական պարտականութիւնն է, նուիրումի առարկան ու տեսլականը: Քրիստոնէութեան ընդունումից ու մանաւանդ հայ տառերի գիւտից ու Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնից յետոյ հայ իրականութեան մէջ տարածուեց այն համոզմունքը, որ իրաւ գրքասէրը, ձեռագիր գրողը, պատուիրողը եւ պահողը երկինք կը գնայ: Այս համոզմունքը մեծապէս նպաստեց հայ ձեռագրերի բազմացման ու գրապահոցների ստեղծման: Բունագողթերի ու պատերազմի օրերին ձեռագրերի փրկութիւնը ժողովուրդը նկատեց առաջնահերթ պարտականութիւն:

Արմէն Մուրատեանը խորապէս հաւատում էր հայկական այդ աւանդութեան արդարացիութեան ու ճշմարտացիութեան: Ընտանիքի տնտեսական հնարաւորութիւնների սահմանափակուածութիւնը, պատերազմը, կոտորածը եւ հերոսամարտը երիտասարդ, պատանի ու երիտասարդ Արմէնին հնարաւորութիւն չեն տուել իրականացնելու գիտութեան մէջ խորանալու ցանկութիւնը, բայց չեն կարողացել սպաննել նրա ուսումնաստեղութիւնը, սէրը դէպի գիրն ու գրականութիւնը: Գաղթականական կարգավիճակը Միջին Արեւելքում եւ ԱՄՆ-ում նրան պարտադրել են պայքարել յանուն հացի ու պատուաւոր գոյութեան: Բայց նա չի հրաժարուել այն գաղափարից, որ «պատուաւոր գոյութիւնը» իր մէջ պարտադրաբար ընդգրկում է հայրենասիրութիւնը, հայութեան ծառայելու պարտաւորութիւնը եւ գրի ու գրականութեան քրմութիւնը: Այս հաւատամքի ծնունդ է հեղինակի գրախօսուող սոյն հատորը: (Արմէն Մ. Մուրատեան, Խելքիս Փշածներէն եւ Այլ էջեր, Խմբագիր՝ Երուանդ Հ. Քաստանի, մեկենասութեամբ Միմի եւ Արմէն Յարութիւնեանի, ի յիշատակ Արմէն Մ. Մուրատեանի եւ Այնթապի ինքնապաշտպանութիւնը կազմակերպող սերունդին, էջ 360, Պէյրութ, 2005)

Արմէն Մուրատեանը մօրեղբայրն է Արմէն Յարութիւնեանի: Վերջինս ոչ միայն մեծապէս տպաւորուած է իր քեռու կերպարով, այլ նաեւ ժառանգել է նրա մշակութասիրութիւնը, հայ գրին ու գրքին ծառայելու վճռականութիւնը, ազգանուիրումը: Ասում են գարմիկը նմանում է իր քեռուն: Տուեալ հատորի հրատարակութեան օրերին Արմէնը նամակ է գրում վաղուց վախճանուած իր քեռուն ու բացայայտում երկու Արմէնների հոգեկան կերտուածքի եւ մտահոգութիւնների ընդհանրութիւնը: Արմէն Մուրատեանի մամուլի մէջ տպագրուած ու անտիպ գործերը մի հատորի մէջ ամփոփելով Արմէն Յարութիւնեան իր երախտիքն ու սէրն է արտայայտում իր սիրած վաղամեռիկ քեռու նկատմամբ: Դա իր քեռու երազի իրականացումն է: Մուրատեանի գործերը պահպանուել են ԱՄՆ-ում: Նախ ող նրա որդի Եղուարդի մօտ: Եւ էլ ուղարկել է դրանք Յարութիւնեանին՝ առ ի տնօրինութիւն:

Հատորի առաջին մասը, «Խել-

քիս Փշացներէն» խորագրով, վերատպումն է Արմէն Մուրատեանի 1954-1957 թուականների ընթացքում Պոստոնում հրատարակուող «Պայքար» թերթում տպագրուած նշմարների (էջ 19-255): Դրանք հիմնականում լուսաբանում են գաղթական հայուն յուզող հարցերը: Դրանց նպատակն է նպաստել նոր կեանքին յարմարուելու, այն հասկանալու նորագաղթի ջանքերին: Նա ոչ այնքան արտապատկերում է նորագաղթի հին ու նոր կեանքի հակադրութիւնը, որքան հնից դէպի նորը անցնելու ճանապարհը: Այս իմաստով այն չի կորցրել իր այժմէակաւնութիւնը, քանի որ վերջին տարիներին ԱՄՆ գաղթած հայերի մեծամասնութեան առաջ ծարացած են նոյն հարցերը, որոշ երանգաւորումներով: Այդ գրութիւնները ունեն պարզ ոճ, բայց ոչ պարզունակ խորք: Դրանք կարճ են եւ գուրկ բարոյախօսական ճառաբանութիւնից: Հեղինակը ցուցադրում է ոչ այնքան իր բանիմացութիւնը, ինչքան իր սէրն ու հոգատարութիւնը դէպի իր հայրենակիցները: Գրութիւնները համեմուած են նաեւ նուրբ հումորով, կարճապատումներին բնորոշ գծերով:

Հատորի երկրորդ բաժնում («Արձակ եւ Չափածոյ էջեր» էջ 229-270) մենք Մուրատեանին հանդիպում ենք գրական այլ դիմագծով: Չափածոները մեզ յիշեցնում Այնթապի ժողովրդական բանասացներին, որոնք իրենց երգերում կամ ոտանաւորներում արտայայտում են կեանքի իրենց փիլիսոփայութիւնը: Կեանքի ելեւէջները, նրա լուսաւոր ու մութ երեւները, ցաւերն ու ժպիտները վերծանելու համար դիմում է բնութեան՝ սերմին, ոսկուն, երկաթին, շերամին, ծաղկավաճառի ծաղիկներին ու դրանց գոյութեան ընթացքը նկարագրելով բացայայտում է ճշմարտութիւններ, ժողովրդական արժէքներ ու կերտում տպաւորիչ պատկերներ: Նկատելով, որ արդի մարդուն ու ընկերութեան հիմնականում պակասում է սէրը նա դիմում է Աստծուն, որ մարդկանց սէր բաշխի որպէսզի նա առանց մեղքի ապրի, որպէսզի իր անձի նման նա սիրի դրացուն ու թշնամուն, որպէսզի նա ներողամիտ դառնայ, զոհաբերուել կարողանայ, որպէսզի նա կարողանայ անընդհատ կատարելագործուելով ու մաքրուելով վեր բարձրանալ:

Արձակ էջերը «Մկնախնամ Ընդհանուր Միութեան» ժողովների արձանագրութիւնների ձեւով տրուած «Ծիծաղաշարք» ու «Չղաչանցող» դրուակներ են եւ, իրենց բնույթով, յիշեցնում են Երուանդ Օտեանի ու Յակոբ Պարոնեանի գրութիւնները: Միտք բանին այն է, որ հայերը չգիտեն օրակարգի հարցերը ըստ էութեան քննարկել ու գործնական որոշումներ ընդունել: Ամէն մի ժողովական իր պարտքն է նկատում շեղուել հարցից, անել տարօրինակ առաջարկութիւններ, անհիմն կերպով հակաճառել ու որոշման ընդունումը ձգձգել:

Հեղինակը առաջարկում է հետաքրքրական տարատեսակութիւն մտցնել «բարերար» հասկացութեան մէջ: Նա գտնում է, որ կան մարդիկ, որոնք իրենց դիպած մեծ հարստութիւնից մի գզալի բաժին յատկացնում են ազգին դպրոց, եկեղեցի, գրադարան, հիւանդանոց, ակումբ կառուցելու համար: Յաճախ այդ շինութիւնները կրում են բարերարների անունները կամ նրանց անունները փորագրուած են կառույցի համապատասխան պատում: Նրանց հե-

ղինակն անուանում է «Անմահ Բարերարներ»: Կան նաեւ հարիւրաւոր ու նոյնիսկ հազարաւոր ազգայիններ, որոնք չեն կարողացել մեծ հարստութիւն դիզել ու դրանից բաժին հանել ազգին: Նրանք իրենց ողջ կեանքի ընթացքում անշահախնդիր կերպով ծառայել են ազգի այս կամ այն հաստատութեան ու այդպիսով մեծապէս նպաստել դպրոցաշինութեան, եկեղեցաշինութեան, մշակութաշինութեան ու ընդհանրապէս ազգաշինութեան գործին: Նրանք նուիրուել են ազգին: Առանց նրանց այդպիսի նուիրումի գրեթէ անհնարին է ազգաշինութիւնը, թէեւ նրանց անունները չեն գրուած շինութիւնների պատերի վրայ ու յիշատակում լայնօրէն: Նրանք Մահկանացու Բարերարներն են: Նրանք մեր ուսուցիչներն են, զանազան ազգային ու եկեղեցական հաստատութիւնների շարքային նուիրուել ակտիվիտաները: Հեղինակն արգարացիօրէն հարց է բարձրացնում նրանց եւս յատկացնել իրենց պատուաւոր տեղը ազգային բարերարների շարքում:

Հրատարակիչները նպատակաշարժար են գտել հատորում գետեղել ազգային Մահկանացու Բարերար Ասատուր Կիւլէսերեանի գրութիւնը Այնթապի ինքնապաշտպանութեան Ազգային Խորհրդի մասին, որը բացառիկ կառուց էր հայ ինքնապաշտպանութեան պատմութեան մէջ: Գրութիւնը անգլերէնից հայերէն է թարգմանել Արմէն Մուրատեանը:

Ազգային Խորհուրդը բաղկացած է եղել 7 հոգիներից, որոնք ընտրուել են ժողովրդի կողմից: Այն օրէնադիր եւ գործադիր մարմին է, որի ոյժն ու հեղինակութիւնը խարսխուած է նրա հիմք հանդիսացող ժողովրդի կամքի վրայ: Այն մարմնաւորում է ժողովրդի միասնականութիւնն է: Այն ստեղծել է մի տասնեակ յանձնախումբեր՝ զինուորական, պարենային: Կիւլէսերեան

որպէս Պարենաւորման Յանձնաժողովի անդամ մանրամասն կը գրի դրա մասին: Նա նպատակաշարժար է գտնում շեշտել «Գոյաւարտը եղաւ կատարեալ յաջողութիւն մը, որովհետեւ այնթապցիին ունէր կոշուածին գիտակից երիտասարդութիւն մը, որ ոչ միայն գէն ի ձեռին խափանեց թշնամիի մուտքը հայկական թաղերէն ներս, այլեւ գիտցաւ հաստատել կատարեալ ռամկապետական կազմակերպութիւն մը իր բոլոր մանրամասնութիւններով ու բաժանումներով»:

Հատորը եզրափակում է «Անտիպ էջեր» բաժինը, որտեղ տրուած են հեղինակի բունազգայի յուշերը: Շարագրուած է Այնթապից մինչեւ Երուսաղէմ տեղանահուած մի խումբի օրագրութիւնը: Նկարագրուած է 1918-ի Սեպտեմբերի 10-ին կապացած մի սգահանդէս, որտեղ ելոյթ են ունեցել Կարապետ Եպիսկոպոս Մազլումեանը, մի հայ բժիշկ, Ֆրանսացի եւ անգլիացի զինուորական ներկայացուցիչներ: Գրեթէ բոլորն էլ խօսել են հայ հայ նահատակների յիշատակը վերարծել եւ ձգտել նրանց վրէժն առնել: Հեղինակի խօսքերով ասաց «Օրագրի ոգին» կարելի է խտացնել հետեւեալ արտայայտութեամբ. «Այսօր օրն է յուսահատութեան՝ վաղը՝ յոյսի: Այսօր օրն է պարտութեան, վաղը՝ յաղթանակի: Այո, յուսալից է «հայու վաղը»: Այս գրուած Այնթապում, ցեղասպանութեան տառապանքը ապրող մի հայ երիտասարդի կողմից, Մայիս 7, 1915-ին: Մեկնաբանութիւններն աւելորդ են:

Գիրքը օգտակար կարող է լինել ամերիկահայ գրականութեան մասնագէտներին, արդի սիւլուքահայ նորակազմ գաղութների ընկերաբանական ու հոգեբանական հարցեր հետազոտողներին, հայ ազատագրական պայքարի պատմութեամբ հետաքրքրուողներին եւ հայրենասէր լայն զանգուածներին:

ՍՈՒՐԵ ՍԱՅԱԿ ԵՒ ՍՈՒՐԵ ՄԵՍՐՈՊ ՇՔԱՆՇԱՆ

Շարունակուած էջ 8-էն

եան երկարամեայ կրթական եւ դաստիարակչական ծառայութիւն ունի մեր ժողովուրդի մատաղ սերունդը դաստիարակելու կապակցութեամբ:

Դոկտ. Անդրէասեան Լոս Անճելըս փոխադրուելէն առաջ՝ 1978էն ի վեր բեղուն գործունէութիւն ունեցած է Հ. Բ. Լ. Միութեան մէջ եւ վարած է Տնօրէնուհի պաշտօն Պոստոնի եւ Թորոնթոյի Հ. Բ. Լ. Միութեան վարժարաններէն ներս: Իսկ 1991 թուականէն ի վեր ան ամենայն նախանձախնդրութեամբ եւ ձեռնհասութեամբ կը վարէ Քանոկա Փարքի Մանուկեան-Տեմիլճեան վար-

ժարանի Փոխ Տնօրէնուհի պաշտօնը:

Անդրէասեան որպէս դասախօս պաշտօնավարած է Ամերիկահայ Միջազգային Գոլէճէն ներս, Լա Վըրն, Գալիֆորնիա, Մաշտոց Գոլէճ՝ Կլէնտէյլ, Գալիֆորնիա, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու այլ համալսարաններէն ներս:

Ան տիրացած է Հայերէն, Անգլերէն, Ֆրանսերէն, Ռուսերէն եւ Թրքերէն լեզուներուն: Մանուկեան-Տեմիլճեան վարժարանը բախտաւոր է, որ իրեն նման կարող եւ երկար տարիներու փորձառութիւն ունեցող Փոխ Տնօրէնուհի մը ունի, որ լծուած է մեր հայ աշակերտութեան դաստիարակութեան եւ կրթութեան:

«ՐԱՅԱՍՏԱՆ» ԴԻՄՆԱԴՐԱՍԸ 25,000 ՏՈՒՍԻ ԵՆՈՒՐԱԲԵՐՈՒՄ

Շարունակուած էջ 15-էն

յայտարարուել:

«Հայաստան» հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանի մարմնի ղեկավարութիւնը Երեւանում էր գտնուում վթարի ժամանակ եւ դրանից յետոյ: «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը պատրաստ է ֆինանսական եւ հոգեբանական աջակցութիւն ցուցաբերել այս աղէտալի պատահարի զոհերի հարազատներին: Մենք ջանք չենք ինչպիսի օգնելու մեր ժողովրդին՝ ուշքի գալու այս աղէտից», ասաց Մարիա Մեհրանեանը հոգաբարձուների խորհրդի նիստին յաջորդած մամուլ ասուլիսի ընթացքում:

Այն անհատներն ու կազմակերպութիւնները, որոնք ցանկանում են ֆինանսապէս օգնել զոհերի ընտանիքներին, կարող են իրենց նուիրատուութիւնը կատարել «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին նշելով «Արմաւիայի զոհերի հաշուեհամարին»: Ամբողջ գումարը ապահով կերպով կը փոխանցուի միջազգային հաշուին: Հարկերը կրճատող ձեռնարկել հետեւեալ հասցեով՝ Armenia Fund, Inc., 111 N. Jackson St. Ste. 205, Glendale, CA 91206, կամ կատարել օնլայն նուիրատուութիւն www.armenianfund.org կայքէջում (ինդրում ենք նշել «Արմաւիայի զոհերի հաշուեհամարին»):

ԽՕՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Անապատի ու տափաստանների բնութեան արհաւիրքների դաժանութիւնը սրտերում անգիր մի ցեղ, արշաւել էր դէպի դպրութեան ու հողի պաշտամունքի մարդկանց երկրներ Մարաստան, Աղուանք, Արմինիա Հայոց աշխարհ: Հազար, հազարներով էին արշաւել, այրել ու աւերել քաղաքներ ու շէնքեր, մինչեւ Բիւզանդիոն եւ դեռ այն կողմը: Եւ անթագաւոր Հայոց երկիրը դարերով կրել էր Սելճուկ մի ցեղի առաջնորդներից մէկի՝ Օսմանի պետութեան տիրակալութեան դաժանութիւնը: Հայերը նրանց Տաճիկ, ալսինքն «դաժան» մարդ էին անուանել: Եւ ինչու են իրենց թուրք անուանում, երբ նոյնիսկ իրենց պատմաբանը վկայում է, որ թուրք ցեղ չկայ, այլ միայն «թուրքիկ» լեզուի տարբեր բարբառներով խօսող առանձին ցեղախմբեր:

Տիրեցին նրանք Հայոց աշխարհին հարիւրաւոր տարիներ: Հայը իր տանը, իր հողում ստրուկ եղաւ՝ առանց անձի ու գոյքի պաշտպանութեան իրաւունքի: Վայրենացած Հնդեւրոպական քիւրտը իր Կորտուքի լեռներից իջել էր ցած ու ասպատակում էր Հայոց դաշտերն ու շէնքերը: Բիրտ ուժով մարել էին հայերի ազատութեան լոյսը, իրենց հաւատքի առաջնորդները հնազանդութեան էին կոչել, սակայն ինչքան հաւատարիմ էին եղել այնքան աւելի էին ճնշուել, հարատահարուել:

«Ղալամ ու Դաֆթար» սիրող հայը արեւմտեան քաղաքակրթութեան սերմերն էր ցանում իր շէնքերում, ազատութեան լոյսի ջահեր էր վառում, ազատ ապրելու շեփորների անուշ կանչեր էր հնչեցնում: Հիւսիսից հաւատակից ռուսներն էին արշաւում դէպի հայոց լեռնաշխարհ եւ նրանց հետ Աշտարակեցի կաթողիկոսն հայոց գինական կամաւորական զնդեր էր առաջնորդում: Տասնիններորդ դարում, մասնաւորապէս նրա երկրորդ կէսից հայրերի սրտերում ազատ ապրելու տենչի կարմիր ծովակներ էին փրփրում, հայոց աշխարհում պայքարի կարմիր արշաւոյսներ էին վառում: Չէ, հայը նորէն գէնք էր շաշում, հայ շինականը նորէն գէնք էր գրկում, կռուով պաշտպանելու իր կանանց պատիւը, մանչերի անխուով քունը: Եւ 1962 թուականին Ձէյթունը իր լեռների բարձունքներից հրացան գարկաւ, հազարներ եկան... պարտուեցին եւ հայը իր շէնքերում նորէն ազատ ապրելու լոյս վառեւ:

Վասպուրականը, Սասնայ աշխարհը 1894-1896 թուականներին ասպատակեցին իշխողների դէմ՝ ազատ ապրելու իրաւունքի ու երկրում բարեկարգումների համար: Սասնայ Դաւիթի թուր կեծակի արեւային շողերն էին ազատութեան հուր կաթում հայոց սրտերին եւ կռիւ: Ճակատեցին թրքական բանակների ու նրանց միացած քիւրտ հրոսակների դէմ: Դիւցազուններ՝ Սերոբ, Անդրանիկ, Գէորգ, Հրայր մարտի առաջնորդեցին լեռնականներին: Կռուեցին, պաշտպանեցին շէնքն իրենց, սակայն թշնամին հազարներով աւելի էր, եւ ընկրկեցին: Դաժան թշնամին աւերեց Սասնայ, Վասպուրականի բազում շէնքեր, սպանեցին երեք հարիւր հազար խաղաղ շինականներ, սպանեցին երազներ, մտքերի թոխիչներ, արարելութեան տեսիլքներ: Քանդեցին տաճարներ, աւերակեցին դպրոցներ, տնտեսական գործունէութեան ձեռնարկումներ կառուցեցին:

Անհրաժեշտ էր, պահն էր հրամայական, հայոց աշխարհի արեւմտեան կողմի աւերումը գաւառներում հայրենաշինութեան ազգանուէր աշխատանքներ իրականացնելու:

Հայ մտաւորականներ յորդորել էին մի «Ազգային Ընկերութիւն» հիմնել, Հայոց աշխարհի տնտեսական ու մշակութային վերականգնումը ու զարգացումը ապահովելու եւ որ այն լինէր ոչ քաղաքական կազմակերպութիւն ու առանց յեղափոխական ձեռնարկումների: Այն գորավիզ լինէր հայոց աշխարհի վերաշինութեան, որբերին ու անտունիներին պատսպարելուն, աւերումը դպրոցներում նորէն յորդէր Մեսրոպի գրերի լոյսը, հայոց լեռներու լանջերին ունչպարներ Նորովեցները, եկեղեցիներում նորէն հնչէին վարդապետների շարականները:

Արմենական սրտերով տրոփող, աստուածային սիրով աւելցուն հայ գիտնականների, գործարարների, ճարտարապետների մի խումբ, գլխաւորութեամբ Պօղոս Նուպար Փաշայի, Քրիստոսի Ս. Յարութեան՝ Չատիկի օրը, 1906 թուականի Ապրիլի 15ին, Պահիրէում, հիմնադրեցին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

Միութիւն, որ հարիւր տարիներ հայերի հետ է, այնտեղ էր որտեղ կարիքը կար վերաշինութեան, հայաշինութեան նաեւ դեռ հարիւր տարիներ պիտի լինի իր ազգի հետ: Հասաւ ապստամբական կռիւներում աւերումը սասուն, Վասպուրական, հայերի մշակութային, դպրոցական կառուցների վերաշինութեան, հայերի տնտեսական ձեռնարկումների վերակազմակերպմանը գորավիզ լինելու: Հայոց աշխարհի համարեայ բոլոր շրջաններում, Կիլիկիայի շէնքերում ու քաղաքներում միութեան մասնաճիւղեր հիմնուեցին: Գլխաւոր հոգիներով հայ ունեւորներ դրամ նուիրեցին, անդամավճարներ մուծեցին եւ այս բոլորը ներդրուեցին իրենց ազգի հայապահպանման նուիրական գործունէութեանը: Ուռձացած, հզոր ընկերային կառույց եղաւ բարեգործականը, հիմա աշխարհի բոլոր ցամաքամասերում գործում են նրա մասնաճիւղերը, նրա դպրոցաշինութեան, հայապահպանման ու բարեգլխութեան հաստատութիւնները:

Միութեանը նախագահեցին աստուածատուր հայեր: Առաջին նախագահը հանդիսացաւ «Մեծ Հայ» Պօղոս Նուպար Փաշան, որը այն հմտօրէն ղեկավարեց մինչեւ 1930 թուականը: Փառաւոր կազմակերպչական աշխատանքներ էր իրականացրել Միութիւնը վերածելով խոշոր հայկական կառույցի: Սեւրում, յաղթող մեծերի հետ փաշան փառաւորապէս բազմեց բանակցութիւնների սեղանին եւ հայեացքը խոժոռած պարտուած թուրքի պատուիրակներին, որպէս փոքր դաշնակից, ստորագրեց թշնամու պարտութեան թուրքի, նրա հետ նաեւ մի ուրիշ «Մեծ Հայ» Աւետիսը: Փաշան էր որ ֆրանսացիների հետ համաձայնագիր էր կնքել թուրքի դէմ կռուելու համար հայկական կամաւորական լէգէոն կազմել՝ փոխարէնը նրանց հովանաւորութեամբ Կիլիկիայում Հայկական իշխանութիւն հիմնել: Այդ լէգէոնի կազմում մարտնչել ու նրա Արարայի գրոհին է մասնակցել նաեւ հայրս՝ Կապորալ Արմենակ Պօղոս Լազիսեանը, որը մտերմիկ յարաբերութիւններ ունէր յայտնի կամաւորական՝ Ռամկավար Կուսակցութեան նուիրեալ Գասպար Մենակի հետ: Ափսոս, մեծերը դարձեալ խաբեցին հայերին, իրենց շահերի համար մեղք գործեցին...:

միութեանը մի քանի տարիներ նախագահել էր նաեւ Գալուստ Կիւլպէնկեանը, նոյն ինքը «Պարոն 5%-ը», որը Հայոց ձեռներէցութեան տաղանդի փառքի լոյսը ցողաց երկիր մոլորակի վրայ, որի կտակած հարատուութիւնից բարութեան լոյս է կաթում հայ հաստատութիւններին, եւ նաեւ ոչ միայն հայերին:

Միութեանը ցմահ նախագահեց բարի Չմիւռնիացի Ալէք Մանուկեանը: Աստուածային բարութեամբ յորդած հայ, որի օրօք Բարեգործականը վերածուեց բարգաւաճ կազմակերպութեան: Նրա անձնական նախաձեռնութեամբ բազում դպրոցներ, եկեղեցիներ, բարեսիրական օժախներ կառուցուեցին: Անանձնական սիրով դէպի բարեգործութիւնը, ինքն էլ դրամական միջոցներ նուիրաբերեց Միութեանը: Գրախոս Աստուծոյ աջին բազմած, հիմա էլ այնտեղ դպրոցներ, եկեղեցիներ չի կառուցում արդեօք...:

Նրան փոխարինեց դուստրը՝ Լուիզ Սիմոն Մանուկեանը, իր առատաձեռն նուիրումներով իր հայրենի երկրի հետ է եւ ամէն տարի իր անձնական միջոցները Հայաստան Համահայկական Հիմնադրամին: Իր նախագահութեան շրջանին Միութիւնը հիմնադրել է Սեւանի Սուրբ-Նեան Դպրեվանքը, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը, որի բազում շրջանաւարտները նպաստում են երկրի տնտեսական կառուցների աշխատանքների կազմակերպմանը եւ դեռ բազում ուրիշ իրագործումներ: Հապա Երեւանում ու այլուր «Ապուր Խոհանոցներ» (Soup Kitchen), որտեղ տարեցներ ու կարիքաւորներ իրենց «հանապազրեայ» կերակուրն են ճաշակում: Լուիզ Սիմոնը որպէս աստենապետ, Միութեան նախագահ՝ Պարոն Պերճ Սեդրակեանի հետ եւ այլ

տասը նուիրեալներով Բարեգործականի անխորտակ նաւն են վարում այնտեղ, որտեղ հայու սիրտն է փափախում:

Բարեգործականը եղաւ ամէն հայու ապաքաղաքական Միութիւն, նրան անդամագրուեցին աւանդական բոլոր կուսակցութիւնների անդամներ, ինչպէս Հնչակեան հայրս անդամ էր բարեգործականին ու կանոնաւոր անդամավճար էր մուծում տեղական մասնաճիւղին: Ճիշտ է, որ նրա ղեկավարները եղել են Սահմանադրական Ռամկավարների, եւ նրա ու վերակազմեալ Հնչակեանների հետ միացումից ստեղծուած Ռամկավար Ազատական Կուսակցութեան գործիչներ, քանի որ նրանց դաւանած փիլիսոփայական գաղափարները համընկել էին բարեգործականի տեսլականին ու ազգապահպանման իրագործումներին: Բարեգործականի ականաւոր գործիչներից էին եղել՝ Վահան Մալեգեան, Արշալ Չօպանեան, Վահան Թէքէեան, Հրաչ Երուանդ, Ռուբէն Հերեան, Կառք նրան արեւալոյս յիշատակներին:

Ես, որպէս հայու մասնիկ, թող աչս համեստ գիրս երախտագիտութեան յարգանքի տուրքի մատուցում լինի Բարեգործականին՝ նրա ազգանուէր իրագործումների համար: Իսկ որպէս անձ, իմ խորախորհուրդ երախտիքի իս

սք եմ յղում Միութեանը, նրա հովանաւորութեան տակ գտնուող Գրիգոր ու Կարապետ Մելգոնեան եղբայրների հիմնադրամով արարուած լուսոյ տաճարում ուսումնառութեան պատեհութեան համար: Ես, տասներեք տարեկան Մուսա Լեռցի մանչը, այդ ճատարում հայու պատմութեան ու մշակոյթի լոյսով արբեցայ, աշխարհի իմաստունների լոյսով հեղեղուեց հոգիս: Օրհնանք Մելգոնեան եղբայրների յիշատակին եւ փառք

ՇՆՈՐԱԻՈՐԱՆՔ

Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ ձէսիքա Կիրակոսեաններու ամուսնութեան ուրախ առիթով (3 Յունիս 2006) «Մասիս» իմբազորութիւնը իր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտնէ ամուսնացող զոյգին, անոնց ընտանեկան պարագաներուն եւ յատկապէս Տէր եւ Տիկ. Ընկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեաններուն:

ՇՆՈՐԱԻՈՐԱՆՔ

ՕՐ. ՆՈՐԱ ԽՊՈՅԵԱՆ
ՊՐՆ. ՍԱՐԳԻՍ ԱԶԱՊԱՀԵԱՆ
ԱՄՈՒՄՆԱՅԵԱԼՔ
3 Յունիս, 2006

Մեր ջերմ շնորհաւորութիւններն են երջանիկ կեանքի բարեմաղթութիւնները ամուսնացեալ զոյգին եւ անոնց ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յակոբ Խաչոյեանին եւ Ընկ. Նազարէթ Աջապահեանին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Սահակ Թուրքեանի
«ԱՐԵԻ ԼԵՈՒԱՆ
ԵՏԻՆ»
Հայրենական
Օրագիրը

Ստանալու համար
դիմել հեղինակին՝
Հեռ. (818) 563-6174

կամ հետեւեալ
գրախանութները
Կլեմէյի մէջ
Ապրիլ՝ (818) 213-4112
Պերճ՝ (818) 244-3830
Սարգսապատ՝
(818) 500-0790

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



AGBU PASADENA HIGH SCHOOL

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School

REGISTRATIONS FOR 2006-2007 IN PROGRESS

- High School Prep grade (8th grade equivalent)
 - Ninth grade
 - Tenth grade
 - Eleventh grade
- First graduating senior class in June, 2008

AGBU High School in Pasadena will provide...

- A challenging college preparatory program in a safe, caring and supportive environment
- Honors and Advanced Placement classes for accelerated students
- Qualified and experienced faculty dedicated to student learning
- Instruction in Armenian language, history and culture
- Small class sizes and low teacher to student ratio
- Professional guidance and counseling
- Affordable tuition fees

Call (818) 883-5379, (626) 794-0363, or (818) 883-2428 for immediate assistance

2495 E. Mountain Avenue, Pasadena, CA 91107
(Corner of Altadena and Mountain)

www.agbuphs.org

AGBU CENTENNIAL SPONSOR



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

